




ՆՇԽԱՐՔ
ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ ՆԱԽՆԻ ՄԱՏԵՆԱԳՐԱՑ



ԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

—1870—

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԹԱԹԱՐԱՑ

ՎԱՐԴԱՆԱՅ ՊԱՏՄՉԻ

ՀԱՆԵԱԼ Ի ՁԵՌԱԳԻՐ ՕՐԻՆԱԿԱՑ
ԹԱՆԳԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ



ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

—1870—







ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԱՌԱՋԻՆ հատոր ներկայս Հայ մատենագրութեան, հատուած 'ի լոյս ընծայել, որ պարզէ զծագմանէն և զբարուց և զպատերազմաց Թաթարաց։ Եւ գրեալ է Վարդանայ պատմչի յաշակերտաց Վանականայ վարդապետի 'ի ԺԳ դարու. 'ի 1247 և ընդօրինակեալ 'ի 1272. և օրինակն զոր ունիմք 'ի ձեռս ձեռագիր է նորին Գրիգորի երիցու Ականց վանացի 'ի Կիլիկիա։ Օրինակս ունի առանձին յիշատակարան զԳրողէն. սակայն 'ի լուսանցս օրինակին ուրեք ուրեք պատահի գրեալ նովին ձեռագրով "Ողորմեա' տէր, Վարդանայ ծառայի քո"։ Նա եւս` կից է օրինակս Միխայէլի Ասորւոյ կաթողիկոսի Ժամանակագրութեանն, որ յայտնի թարգմանութեամբ է նորին Վարդանայ 'ի յիշատակարանին ծանուցեալ։ Եւ ոճս և ընթացք պատմութեանն խիստ նմանեն զսա նորին լինել հեղինակութեան։ Յորում 'ի պատմութեանս Թաթարաց պատմէ և զՀայոց թագաւորութենէ, որով և մասն համարի պատմութեան Հայոց։ Զոր 'ի գլուխ գլուխ բաժանեալ ըստ զանազանութեան պարագայից 'ի մի պատմեցից, տամք 'ի տպագրութիւն։



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա.

Վասն Ազգին Նեստորեաց թէ ուստի՞ կամ յորմէ՞ ցեղէ աճեցին եւ տիրեցին բազում աշխարհաց եւ գաւառաց։

Յետ ելանելոյ աստուածստեղծ մարդոյն Ադամայ 'ի դրախտէն, և պատուիրելոյ տեառն Աստուծոյ քրտնաջան աշխատութեամբ ուտել հաց զամենայն աւուրս իւր, յաղագս խաբման կնոջն և հաւանութեան պիղծ օձին, վասն մոռանալոյ զգեղեցիկ պատուիրանն Աստուծոյ. և 'առաջ յայնմ' հետէ կարօտացաւ բնութիւն մարդոյն հեշտութեան և մարմնական զբաղման։ Իսկ բանսարկուն սատանայ վասն չար նախանձուն իւրոյ՝ հանապազ ուսուցանէր զմարդիկ գործել զանարժանս. որպէս Կայենի՝ զեղբայրասպանութիւնն, և անօրէն հսկայիցն՝ զլօրանալն 'ի մեղս և ուտել զմեռելոտիս։

Եւ զայս տեսեալ արարիչն բարկացեալ վասըն չար գործոց մարդկանն՝ Ջրհեղեղաւ կորոյս զամենեսեան. պահելով սերմն մարդկութեան

փերանելի արդարոյն զՆոյ: Ուստի յետ տասն ծննդոցն Նոյի արդարոյ, ծնաւ հայրն հաւատոյ որդւոյն Թարայի մեծն Աբրահամ՝ որ հայր վերամբարձ անուանեցաւ. վասն զի 'ի սմանէ սերեցան բազում ազգք և այլինք, յաղագս օրհնութեանն Աստուծոյ որ առացաւ նմա, «Բազմանալ զաւակի նորա իբրև զաստեղս երկնից և որպէս զաւազ առ ափն ծովու»: Ուստի և կատարեցաւն իսկ:

Զի յազատ կնոջէն Աբրահամու ծնաւ Իսահակ. և 'ի նմանէ Յեսաւ և Յակոբ. և 'ի Յակոբայ երկոտասան նահապետքն. և մեծ մարգարէն Դաւիթ. ուստի յայտնեցաւ 'ի տանէ և յազգաթուէ Դաւթի Բանն Աստուած տէրն մեր Յիսուս Քրիստոս:

Իսկ յաղախնացն Աբրահամու, որ են անուանք նոցա միոյն Հագար և միւսոյն Կետուրայ. 'ի Կետուրայ ծնաւ Իմրան, որ են Պահլաւք. ուստի քաջն Արշակ, և սուրբն Գրիգոր լուսաւորիչն Հայոց. Իսկ 'ի Հագարայ՝ Իսմայէլ, որ Թարգմանի լուեալ Աստուծոյ, ուստի Իսմայէլացիք: Զոր հրամայեաց Աստուած Աբրահամու 'ի ծննդեանն Իսմայէլի տալ նմա զպարարտութիւն երկրի, և առնել զնա յազգ մեծ. և ձեռք նորա 'ի վերայ թշնամեաց իւրոց, սրով և աղեղամբ առաւել քան զամենայն ազգս աջողեալ:

Իսկ Յեսաւայ յորդւոյն Իսահակայ ծնան Յեսաւացիք, որ են Սկիւթացիք սեաւք և վայրագք և այլազգիք. և 'ի նոցանէ ծնան Բո-

բամիճք և Լեկզիք, որ բնակին 'ի ծակս և 'ի
դարանս, և բազում ոճիրս գործեն։

Եւ առ ի թէ Եգոմնայեցիք այլ 'ի սմա ծնըն-
դոցն են, որ են Ֆռանգք։ Ուստի և խառնեալք
'ի միմեանս երեք ազգս այս Հագարու, կեն-
դուրայ և Եսաւայ, և ծնաւ 'ի սոցանէ ծնունդ
այլազգեմ ազդեցութեամբ չարին, և անուա-
նեցաւ Տաճար. որ առ ի սուր և թեթև։

Իսկ սուրբն Ներսէս ասէ զսա 'ի մնացորդա-
ցըն Հագարու՝ խառնեալ ընդ ազգին Գոմ-
գայ, որ 'ի Թորգոմայ, որք ունին զՍկիւթիա
մասն երկրի. որ սկսանի յԱԹԼ գետոյ առ Ե-
մաւօն լերամբն՝ ձգեալ մինչև 'ի ծովն Կաս-
բից. ուր բնակեալ են ազգք երեսուն և երեք,
որ խժական անուամբ կոչին խուժ և դուժ.
այօրինքն ազգք առանձնականս։ Եւ գլխաւորին
ամենեցուն առ ի Բուշխ։

Եւ յազգացն այնոցիկ միոյն առ ի Թուղարք-
զոր կարծեմք թէ այս է, որ ասին Թաթարք։

ԳԼՈՒԽ Բ.

Վասն կեցութեան, կրօնից, օրինաց եւ գլխա-ւորի նոցա։

Եւ որպէս յոմանց 'ի նոցանէ լուաք, եղեն
'ի Թուրքաստան աշխարհէն իւրեանց ազգն
այն, և մեկնեցան 'ի կողմ հիւս մասին արևել-
եայց, և կային անդ առաջակութեամբ. վայ-
րենաբնակք և յոյժ աղքատք ղբաղում ժամա-

ծնակս ։ Եւ սպաշտօն ինչ ոչ ունէին բայց միայն պատկերս Թաղէայ . զոր տակաւին կրէին ընդ ինքեանս 'ի պէտս կախարդութեան ։ Բայց ընդ արեգակն զարմանոյին , որպէս ընդ զօրութիւն ինչ աստուածային ։

Եւ ապա յանկարծակի ուշաբերեալք , յոյժ նեղեալք 'ի Թշուառական և յաղքատ կենացն , կոչեցին յօգնութիւն զԱստուած զարարիչն երկնի և երկրի . և ուխտեցին նմա ուխտ մեծ կալ 'ի հրամանս նորա ։

Որոյ երևեալ հրեշտակ հրամանաւն Աստուծոյ 'ի կերպարանս ոսկեփետուր արծուոյ , և կոչեալ 'ի ձայն և 'ի բարբառ նոցին լեզուի ղզլխաւորին նոցա , որոյ անուանն տուիր Զանկըր . և նա երևեալ կացեալ հանդէպ արծուակերպ հրեշտակին հեռագոյն և 'ի բացուստ իբրև 'նետընկէց մի . և այս արծիւն ըստ նոցա լեզուին ասաց զամենայն հրամայեալսն Աստուծոյ ։

Եւ այս է օրէնքն Աստուծոյ , որ եդեալ է 'ի նոսա , զոր անուանեալ են իւրեանքն խաւախ. առաջին՝ որ սիրեն զմիմեանս . երկրորդ՝ մի շնալ . մի գողանալ . մի սուտ վկայել . մի զոք մատնել . պատուել զծերս և զաղքատս ։ Եւ եթէ գտցի 'ի նոսա յայսպիսի մեղանաց , ըմպանիցին գործողքն մեղացն ։

Եւ մինչ զայս ուսոյց հրեշտակն , ապա կոչեաց զանուն գլխաւորին Ղայան . որ և ասցաւ Զանկըր Ղայան կամ Զանկըր խան ։ Եւ ասաց հրեշտակն տիրել 'ի վերայ բաղում ազ-

խորհոց և գաւառաց . և բաղձանալ նոցա անթիւ և անհամար բազմութեամբ . որ և եղեւն իսկ :

Եւ կատարեցաւ առաջեալն 'ի տեառնէ , որպէս 'ի ձեռն մարգարէին սպառնայր Աստուած ասելով . թէ « Բաժակ ոսկի է 'ի ձեռին իմում Նաբուգոդոնոսոր , և ում կամիմ , արբուցանեմ զնա » : Այսպէս և այլադէմ ազգըս այս ոչ միայն բաժակ , այլ և միուր գանութեան հասեալ 'ի վերայ մեր , վասն բազում և ազգի ազգի մեղաց մերոց . զի զօրհանապազ բարկացուցանեմք զարարիչն Աստուած 'ի գործըս մեր : Վասն որոյ զարթոյց զսոսա առէ բարկութեամբ առ 'ի խրատել զմեզ , վասն ոչ պահելոյ մեր զպատուիրանս նորա :

ԳԼՈՒԽ Գ .

Առաջին պատերազմ Թաթարաց ընդ Պարսիկս. ապա ընդ Աղուանս եւ ընդ Վիրս . եւ դիմադրութիւն եւ երկայնակեցութիւն նոցա։ Հպատակութիւն Հայոց եւ Վրաց :

Իսկ յորժամ իմացան այլադէմ ազգն այն ; թէ կամք է Աստուծոյ տիրել մեզ 'ի վերայ երկրի . ապա այնուհետև զօրաժողով լեալ , գնացին 'ի վերայ Պարսկաց , և առին 'ի նոցանէ փոքր քաղաք մի : Եւ Պարսիկքն զօրացեալ առին դարձեալ զիւրեանցն և զնոցայն :

Եւ ապա դարձեալ ձայն ձգեցին յազգն

իւ րեանց ուր և կային բնակեալ ազգն եառլեծ. և այլ ևււ դարձեալ յարձակեցան 'ի վերայ Պարսից և յաղթեցին նոցա, և առին զքաղաք և զամենայն ինչս նոցա ։

Եւ 'ի վերայ այսր ամենայնի՝ դարձեալ հը-րամանաւ առին 'ի Ղանէն իւրեանց, որ կոչեցաւ Զանկըղ Ղան. և յարձակեցան 'ի վերայ աշ-խարհին Աղուանից և Վրաց ։

Եւ զայս լուեալ Թագաւորն Վրաց զհամ-բաւ գալոյ Տաթարին, ել ընդդէմ նոցա վաղ-ուն հաւաքեր հեծելով 'ի դաշտն մեծ, որ կոչի Կոտման. որ կայ առաջի տերունական բերդին։ Եւ յորժամ խմբեցաւ պատերազմն, յայն ժա-մըն ազգեցութեամբն սատանայի՝ որ հակառակ է նա ճշմարտութեան՝ տէրն Մանասատագումից Հա-միդուլայ անուն՝ յաղագս քինու ինչ չլատեաց զձին Աթաբակ Իւվանէի. զի յայնմ՝ ժամանա-կի մեռեալ էր Թագաւորն Վրաց Լաշէն. և մնացեալ էր սմա որդի մի Դաւիթ անուն և դուստր մի Ռուսուդուքան անուն. և անկեալ էր Դաւիթն 'ի ձեռս Հոռոմոց Սուլտանին. և կայր 'ի բանտի. և քոյր նորա Ռուսուդուքան ունէր զթագաւորութիւնն վերակացութեամբ Իւվանէի. որոյ Աթաբակ անուանեցաւ ։

Իսկ յորժամ եհաս համբաւ գալոյ Տաթա-րին ըստ վերագոյն ասացելոցդ. յայնժամ առ-եալ Իւվանէ զհեծեալ թագաւորութեն Վրաց. և եկն 'ի Գագ՝ առ մեծ և իմաստուն իշխանն Վարհամ, որդի Պլու Զաքարէի. և առեալ զնա զօրօք իւրովք գնաց ընդդէմ Տաթարին ։

Եւ առեալ կորովի և մեծ իշխանն Վարհամ զաղջս Թեւն, և իւրանէ զծախս, և յորժամ յարձակեցան 'ի մխմեանս այս ոճիրս գործեցաւ՝ (որ գրեցաւ) 'ի ձեռն անիծելոյն Համիդաւլայ ։

Իսկ յորժամ ետես ազգն Նետողաց այսպիսի երկպառակութիւն 'ի նոսա, յայնժամ զօրացեալ յարձակեցան 'ի վերայ Վրաց հեծելոցն, և յանխնայ կոտորեցին զնոսա ։

Իսկ մեծ իշխանն Վարհամ տէրն Գագայ առեալ զաղջս Թեւն՝ մինչեւ յերեկոյն գնաց կոտորելով զՏաթարն յանխնայ յարձակմամբ. մինչեւ առ հասարակ լցաւ դաշտն Մագամոյ կոտորեալ Տաթարով ։ Եւ ինքն Վարհամ իշխանն Գագայ լուաւ զկոտորումն Թագաւորութեանն. յայն ժամու մեծապէս տրտմեալ և Թողեալ զգործ պատերազմին, դարձաւ յամուրս բերդին իւրոյ որ կոչի Քարհերձ ։ Եւ այս եղեւ 'ի Թուականութեանն Հայոց վեց հարիւր վաթսուն և երեք ։

Եւ յետ երից ամաց անցանելոյ դարձեալ եկն Տաթարն, և էառ զԳանձակ շահաստան. և յանխնայ կոտորեաց և գերեաց. և դարձաւ յերկիրն իւր բազում աւարաւ և գանձիւք ։

Իսկ եթէ զի՞նչ նմանութիւն ունէր առաջին Տաթարն, ասասցուք և զայն ևս ։ Զի ոչ էին իբրեւ զմարդ առաջինքն, որ եկին 'ի մերին երկիրն. այլ էին ահագինք տեսողաց և անպատմելիք. զի գլուխն մեծ էր իբրեւ զգոմեշու. աչքերն նեղ՝ իբրեւ զձագու. քիթն կարճ՝

իբրեւ զկատուի . զռունչն՝ մռունչ իբրեւ զշան . մէջքն՝ բարակ զինչ մրջիւն . ատամունքն՝ կարծր զերկաթ խոզի . մօրուս բնաւ իւկ չունէին . տարալայժ ունէին զառիւծու . ձայնն ճչող զերդ արծուի . ուր չպատմէր , անդ գտանէր : Կանայքըն իւրեանց ունէին զգակոնի տուլուլի վերանալի ; ծածկեալ չարագուրով փըրպակի . երեսըն լոյն ոսկեւքի սպանմամբ դեղով ծեփէին . իժի նման ծնանէին , և զայլս պէս կերակրէին : Մահն 'ի նոսա իսկի չերեւիւր . վասն այն՝ որ երեք հարիւր տարի ապրէին . այս ցեղ էին առաջինքն որ եկին յաշխարհն մերին . և հաց ամենեւին չուտէին :

Դարձեալ այլ եւս հրաման առեալ 'ի Ղանէն , և եկին երեք գլխաւորք 'ի վերայ Աղուանից և Վրաց , և առին բազում քաղաքս և բերդս , և էին անուանք նոցա միոյն Զաւըրման , երկրորդին՝ Բենալ , երրորդին՝ Մուլար . և եղեալ 'ի վերայ բերդերացն կխար անհամար հեծելովք . և առին զառաջինն Ըզէ Համքար հուպ առ Գանձակ . որ յառաջ առեալ էին . առին զՍագամ , զՔարհերձ , զՏերեւեն . զմեծ գիւղն Թագաւորանիստ . զԳարդման , զԵրքեւանքն , զՄծբնայ բերդ : Առին և գործով զամուր դղեակն զՏաւուշ , որ էր աթոռ Սուլտանի . առին զմերձունականն և զնոր բերդըն . առին և զՔարին(1) մեծ վարդապետին բա-

(1) Այն՝ յորում նստէր և ուսուցանէր , ուր խոյր և էլէւէր մի վարդապետը . Կիրակոս .

զուամ՝ ընչիւք 'ի լի. և տարան զինքն զփառա-ւոր վարդապետն մեր Վանական՝ ծառայ աշա-կերտօքն իւրովք ։ Իսկ երկիրն ամէն 'ի միա-ոյն յաւակից լեալ, եառուն բազում գանձս և-ոսկիս, և գնեցին զվարդապետն իւրեանց ա-շակերտօքն ։

Յետ այսորիկ յորժամ իմացան իմաստուն իշխանքն Հայոց և Վ. րաց, թէ Աստուած է տուեալ զօրութիւն և յաղթութիւն նոցա առ-նուլ զաշխարհս մեր, այս գործ և սէր կա-պեալ, գնացին 'ի հնազանդութիւն Տաթարին, և խոստացան տալ հարկս այսինքն մալ և թա-ղար. և ինքեանք հեծելով գնալ ընդ նոսա ուր և տանիցին. և հաւանեալ Տաթարին թողին զկոտորումն և զաւերումն աշխարհին. և ին-քեանք դարձան 'ի տեղիս իւրեանց յերկիրն Մուղանայ ։ Բայց թողին գլխաւոր մի Ղարա Բուղայ անուն, քակել զամենայն ամուրս երկ-րին զոր առեալ էին. զոր և քակեցին 'ի հի-մանց զանառիկ բերդսն պնդեալսն 'ի Տաճկաց բազում ծախիւք ։ Եւ այս այսպէս գործեցաւ ։

ԳԼՈՒԽ Դ.

Ասաց գիտաւոր, վերստին յարձակումն Թաթա-րաց, եւ յետս կոչն յաւերեշոյ ցաշխարհս նուաճեալս. եւ բաժանումն աշխարհաց 'ի գլխաւորսն ։

Յաւուրս յայսոսիկ երեւեցաւ աստղ մի գիսաւոր աւուրք ինչ. և դարձեալ ծածկեցաւ ։

Նոյն և 'ի յայս աւուրքս խաւարեցաւ արեգա-
կըն 'ի վեց ժամէ աւուրն մինչեւ ցինն ժամն ։

Իսկ երեք գլխաւորքն որ ասացաւ առին զաշխարհն Վրաց և Աղուանից, և դարձան յերկիրն Մուղանայ, որ միշտ կանաչ լինի խոտն ամառն և ձմեռն վասն պարարտութեան երկրին և քաղցրութեան օդոյն . և անդ կացեալ աւուրս ինչ, դարձեալ այլ եւս խորհեցան գալ 'ի վերայ քրիստոնէից, առ ոչինչ ունելով և համարելով զկոտորումն և զգերումն քրիստոնէից յաշխարհէն Վրաց և Աղուանից ։ Որ և զԱնուանի քարն Շմեղայ առին . և բիւրք բիւրուց կոտորեցին 'ի նմա . որ և թիւ ոչ գոյր կոտորելոցն . և զողջային գերեցին յամենայն աշխարհէն անթիւ բազմութեամբ ։ Եւ այսու ոչ յագեցան . այլ դարձեալ խորհեցան գալ 'ի վերայ երկրին, և առհասարակ կոտորել զամենայն երկիրն ։

Իսկ Նախախնամութիւնն ամենակալին Աստուծոյ ոչ առնէ անտես զյուսացեալսն առ Նա . զի անարժան խորհուրդս նոցա և զանիրաւ խափանեաց, և զերից գլխաւորացն՝ որ ասացաւ, զերկուսն սատակեաց ։

Եւ թէ զի՞նչ խորհեցան, ասասցուք սակաւիկ ։ Երեկոյն արարին խուռուլթայ, որ ասի ժողով, և խորհեցան կրկին եւս դառնալ 'ի վերայ կալեալ երկրին, և առհասարակ կոտորել . և զայս ոչ երեքն միաբան խորհեցան . այլ և երկուքն ։ Իսկ Չաւրմանն բարի խորհրդով ասէր 'ի հրամանէ նախախնամութեանն Աստու-

ծոյ , բաւական լինել զաւերուածս և զկոտորուածս աշխարհի . ասելով թէ չէն միայն սա է . զերկիր վաստակեն , եւ զկէսն մեզ տան զապրանացն զայգւոյ և զարտոյ , և կիսովն լինիցեանք ապրելոյ :

Եւ մինչ ՚ի յայս խորհուրդս էին , օրն երեկոյացաւ և խաւարութեան խափանեցաւ և ՚ի քուն մտանէին . և մինչ լուսացաւ , անկեալ զերկուս զլխաւորսն մեռեալ , որք զչարսն խորհեցան . և միւսն էր կենդանի , որ զշինութիւն և զխաղաղութիւն երկրին կամեցաւ . որոյ անունն էր Զաւրման :

Եւ ապա եկեալ Զաւրմանն վկայիւք բանիւ գնաց առ մեծ գլխաւորն իւրեանց Զանկեղ Ղանն . և պատմեաց զամենայն խորհեալսն զիւրն և զերկուց գլխաւորացն , զինչս սատակումն և զիւր կենդանի մնալն ՚ի միում գիշերի :

Իսկ Ղայանն իբրեւ լուաւ , զարմացեալ ասաց ցԶաւրմանն . այն զինչ երկու գլխաւորքն խորհեցան , չէր հաճոյ Աստուծոյ . վասն այն յանկարծամահ եղեն : Իսկ դու վասն բարի խորհրդոց քոց ոչ մեռար . զի Աստուծոյ կամք է առնուլ զերկիր և ՚ի շինութիւն պահել . և դնել սաստ կալ ընդ հրամանաւ մեր , և տալ մեզ տուրս և մալ և թաղար և զփշուր : Իսկ զայնոսիկ որ ոչ հնազանդին հրամանաց մեր և ոչ տան մեզ հարկ , զայնոսիկ սպանանել և ըղտեղին քակել : Իր այլքն որ լսեն և տեսանիցեն , երկիցեն և ոչ արասցեն այնպէս :

Եւ զայս ասացեալ Ղայանն առաջ հրամայեաց Զաւրմանին գնալ և պահել զուխան իւր

զոր խորհեցաւ և ապրեցաւ 'ի մահուանէ ։ Եւ եառ զբարեմիտ կինն իւր զԱյթանա խաթունն Զաւրմանի՛ , և անուանեաց զնա Զաւրմազդն ։ Իսկ Զաւրմազդն առեալ զբարեսէր և զշնորհաւոր կինն Զանկըզ խանին զԱյթանա խաթունն . եկն նստաւ 'ի Մուղան , որ է ձմերոց Տաթարին հանդերձ հարիւր և տասն գլխաւորօք ։

Եւ ապա արարին խուռուլթայ և ժողով մեծ հրամանաւ Զաւրմազդանին , և բաժանեցին զերկիրս 'ի միմեանց վերայ հարիւր և տասն գլխաւորքն ։ Արարեալ ընդ երեք մասն զաշխարհս , բաժին մի գնացին ընդ հիւսիսոյ կողմն . և բաժին մի ընդ հարաւ , և բաժին մի ընդ մէջ երկրի , որ այժմ ունին դեռ եւս ։

Իսկ անուանք գլխաւորացն որ 'ի մէջ երկիրքս մնացին , են այսոքիկ . Ասութու նուինն . որ էր ոսկր Ղանին . Զաղատայն՝ որ Ղան կոչեցաւ , և յետոյ Սանիթայ . միւս այլ փոքր Զաղատայ . Բաշու նուինն , որ դրին գլուխ ամենայն զօրացն . Ասար նուինն . Խութթու նուինն . Թուլթառ նուինն . Ա. գալթայ նուինն Խոջայ նուինն . Խուռուռմչի նուինն . Խուռնան նուինն . Թենալ նուինն ։ Անգուրագ նուինն ։

Նոյնպէս և այս երեքտասան գլխաւորքս բաժանեցին 'ի միմեանց վերայ զերկիրն Վրաց և Աղուանից լեառնով և դաշտով . և զմեծ տուն Զաւրմազդանին բերին 'ի Կանձակ շահաստան . որ զառաջինն աւերեալ և յետոյ այլ շինեցաւ ։

ԳԼՈՒԽ Ե.

Հարկատուութիւն իշխանացն Վրաց եւ Աղուանից. եւ Վանական վարդապետ Հայոց։

Իսկ մեծ և անհնարին իշխանքն Վրաց և Աղուանից եղեն ընդ հարկաւ նոցա՝ որ կամաւ և որ ակամայ. և տային անխափան զամենայն սահմանեալ հարկսն. զոր յառաջագոյն գրեցաք. և ինքեանք ըստ ուժոյ և ըստ կարողութեան իւրեանց հեծելովք գնային ընդ նոսա ՚ի խաղան. և առնուին զոչ հնազանդեալ քաղաքս և զբերդս աւերելով և գերելով. և կոտորելով անխնայ զայրս և զկանայս զքահանայս, և զկրօնաւորս. գերելով զարկաւագունսն ՚ի ծառայութիւն իւրեանց. կողոպտելով զեկեղեցիս քրիստոնէից աներկիւղաբար. և զգաւառական նշխարս սրբոց և զխաչս և զգիրս մերկացուցեալ ՚ի զարդուց, առ ոչինչ համարեալ ձգէին ընդ վայր։ Եւ արդ՝ զո՛ր աղէտ և զպատահումն ժամանակիս գրեցից. զբաժանումն հարց և մարց ՚ի յորդւոցն. թէ զսիրելեաց և զմերձաւոր ընտանեաց զխափանումն սիրոյն. զկը բերոյ սեպհական ընչիցն առնումն, թէ զգեղեցիկ ապարանացն ՚ի հրոյ ծախումն. զմանկտւոյն ՚ի գիրկս մարցն զենումն. թէ զգեղեցիկ և զփափկասուն երիտասարդաց և ըզկուսից բոկ և մերկ գերումն։

Վա՜յ անցաւորիս. կարծեմ թէ ամենայնն

յիմոց պարտեացն հանդիպեցաւ . զոր տէրն և արարիչն մեր . այն որ Ներող է և երկայնամիտ այց արասցէ հօտի իւրոյ , զոր գնեաց պատուական արեամբն իւրով :

Յայսմ 'ի Նեղ և 'ի դառն ժամանակիս փայլէր իբրև զարեգակն սուրբ հոգի վարդապետացն մեր Վանական յերկիրն արեւելեան , երկրորդ արեւելք անուանեալ . լի լուսով և անհաս գիտութեամբ ամենիմաստ Հոգւոյն սրբոյ . զոր եւ բազում երկամբք և աշխատութեամբ ձրի բաշխէր վկերականուրն հոգեւոր , այսինքն զբան վարդապետութեան Հոգւոյն , Նմանեալ Երկնաւոր վարդապետին Քրիստոսի հեզութեամբ և խոնարհութեամբ , լռութեամբ և երկայնմտութեամբ : Սիրող որբոց և այրութեանց խաչի և եկեղեցւոյ . ժամասացեղեաց և ժամարարաց , քահանայից և կրօնաւորաց : Առ մեծամեծն՝ անհարկու . առ աղքատսն և կարօտեալսն՝ քաղցր . առ մեղուցեալսն՝ անոխակալ . գնելով ըղդեղ ապաշխարութեանն Թեթեւագոյնս , որպէս զի կարող լինիցին տանել զլուծ ապաշխարութեանն , և վերստին Նորոգել հոգւով եւ մարմնով , և կալ հաստատուն 'ի հաւատս Ճըշմարիտս . փառաբանիչս և երկրպագուս ամենասուրբ Երրորդութեանն :

Նոյնպէս և գովելի աշակերտքն իւր Վարդան և Կիւրակոս . Առաքեալն և Յովսէփ խաչանման բաժանեալ զաշխարհն արեւելից լուսաւորեցին կենարար վարդապետութեամբ Հոգւոյն սրբոյ . Այլ և բազում որդիս 'ի փառս

ածին ձրի բաշխելով զտիրական և զխաչանիշ դաւազանն նմանեալ փառաւոր վարդապետին իւրեանց . կատարելով զտեառն հրամանն թէ « Ձրի առէք և ձրի տուք » . զոր և զկեանս նոցա տացէ Եկեղեցւոյ իւրոյ Քրիստոս Աստուած ընդ երկայն ժամանակս . ամէն :

ԳԼՈՒԽ Զ.

Պատերազմունք եւ աւերածք Բաչու Նուինին 'ի կարնոյ քաղաք եւ 'ի Հոռոմս:

123?

Ի վեց հարիւր յութսուն և ութ թուին Հայոց զօրաժողով լեալ Բաչու Նուինն զլխաւորըն Տաթարին , եկն 'ի վերայ Կարնոյ քաղաքի անթիւ բազմութեամբ . և ածեալ 'ի հետար զամիսս երկու , առին . և յանխնայ կոտորեցին և աւերեցին զքարելն և զգեղեցիկ քաղաքն : Նոյնպէս և զվանորայս երկրին և զհրաշալի եկեղեցիսն անմարդաբնակ արարին գերելով և աւերելով : Որոյ Հայոց և Վրաց իշխանքն առեալ բազում գրեանս տօնական և մարտիրողէք , առաքեալ և ընթերցուած , գործք և ոսկեգիր աւետարանք անհաման փարթամութեք զարդարած 'ի շինութիւն և զարդ որդւոց Նոր Սիոնի . ուստի առեալ տարան յաշխարհն արեւելից , և լցուցին զվանորայսն ամենայն զարդուք Եկեղեցւոյ : Եւ 'ի վերայ այսր ամենայնի զկնի միոյ ամի անցանելոյ ; դարձեալ այլ եւս զօրաժողով եղեն ազգն Նետողաց հան-

դերձ Հայոց և Վրաց իշխանօքն, և եկին 'ի վերայ աշխարհին Հոռոմոց անթիւ բազմութեամբ ։

Եւ գլխաւորն զօրուն Բաչու Նուինն յաջողեալ էր 'ի գործ պատերազմի. ուր և հանդիպէր ընդդիմանալեացն իւրեանց, բազում յաղթութիւնս առնէր. բայց պատճառ յաղթութեանն էին Հայոց և Վրաց իշխանքն, որ լինէին երեսք զուաջինն. և ուժգին բախելով 'ի թշնամիս յարձակէին. և այսպէս զկնի նոցա Տաթարն նետիւ և աղեղամբ ։

Իսկ յորժամ մտին յերկիրն Հոռոմոց ելաւ ընդդէմ նոցա Խիաթադին սուլտանն հարիւր հազարօք. և վաթսուն հազարօք. և էր որդին մեծին Ղալուէի առ Սուլտանն 'ի վաղուց ժամանակաց ։ Եւ յորժամ կազմեցան 'ի գործ պատերազմին՝ հանդիպեցան զօրք Տաթարին և որդին Ղալուէի հանդէպ միմեանց 'ի ձախոյ թեւն. և մեծայաղթ իշխանքն Հայոց և Վրաց ընդդէմ Սուլտանին զօրացն յաջոյ թեւն ։ Եւ յորժամ սաստկացաւ մարտն, քաջ և անուանի որդին Ղալուէի դարձոյց զՏաթարըն, և զբազումս կոտորեաց 'ի նոցանէ ։

Իսկ Վրաց իշխանն Տէրն Գագայ, որդին մեծին Վարհամայ թոռն Նպլու Զաքարէի Աղբուղայ անուն, քաջապէս մարտուցեալ ընդդէմ զօրու Սուլտանին, հանդերձ այլ ազատագունդ զօրօքն Հայոց և Վրաց որք ընդ նմա. և դարձուցեալ զաջ թեւ զօրաց Սուլտանին, բազումս ամիրայից և մեծամեծաց գլուխս հատեալ, յորժ

տրամեցուցին զՍուլտանն ։ Եւ օրն երեկոյացեալ թողին զգործ պատերազմին, և բանակեցան հանդէպ միմեանց 'ի մէջ դաշտավայր տեղեացն. որ կայ ընդ մէջ Կայնոյ քաղաքի և Երզնկային ։

Իսկ ընդ լուսանալ միւս այլ աւուրն զուգեցան զօրքն Տաճարին և Հայոց և Վրաց զընալ ընդդէմ Սուլտանին 'ի պատերազմ։ Եւ զօրօքն բազմութեամբ ձիաթող եղեալ 'ի վերայ բանակի Սուլտանին գնացին. և յորժամ հասին 'ի տեղի բանակին այլ ոչինչ գտին, բայց միայն զվրանսն բազում ոսկւոյ լցեալ. և զվրան Սուլտանին տեսին բազում գանձիւք զարդարեալ ներքոյ և արտաքոյ, և զպայանք կապեալ ինձ առիւծ և յովազ առ դուրս վրանի Սուլտանին. քանզի 'ի գիշերին յայնմիկ փախուցեալ էր Սուլտանն ամենայն զօրօք իւրովք յերկմըտութենէ ամիրայից, որ կամէին հնազանդել Տաճարին ։

Եւ տեսեալ Տաճարին զփախուստ Սուլտանին, կացուցին սակաւ մի 'ի զօրացն պահապանս զգուշութեամբ 'ի վերայ վրանիցն. ասելով թէ խաբէութիւն ինչ է ։ Եւ այլ բազմութիւն զօրացն արձակեցան զհետ Սուլտանին, և ոչ կարացին ըմբռնել զնա, զի յամուրս երկրին իւրեանց հասեալ էին ։ Իբրև գիտացին եթէ ստոյգ փախուցեալ է Սուլտանն Հոռոմոց դարձան յետս զօրք Տաճարին, և առին զամենայն ոսկիս և զկարասիս նոցա, հանդերձ մեծամեծ գեղեցկաերանգ վրանօքն զոր թողեալ էին

տու ահի Տաճարին, և ինքեանք փախուցեալ։ Եւ ապա 'ի վաղուն ուրախութեամբ մեծաւ յարձակեցան 'ի վերայ աշխարհին Հոռոմոց. առին զԵրզնկայն յառաջագոյն, և թողին Ղահնայ։ Առին զԿեսարիայ և բաղում արիւնհեղութիւնս արարին 'ի նմա, վասն ոչ տալոյ ըզքաղաքն. այլ կային ընդդէմ Տաճարին կռուով. վասն զի բազում հեծեալ կայր բնակեալ 'ի նըմա 'լցեալ ամենայն բարութեամբ. և ոչ տային զքաղաքն սիրով։ Իսկ խորամանգ զօրք Տաճարին ջան եդեալ առին խորագէտութեամբ, և առհասարակ կոտորեցին զմեծամեծսն, և զփոքունըն գերեցին յանխնայ ամենայն ընչիւք իւրեանց։ Եւ դարձեալ առին զԿոնն և զԱխշորն հանդերձ մեծամեծ գեղօք և վանորայիւք։ Եւ ապա յարձակեցան 'ի վերայ Սեւաստայ. և գործով առին զնա. բայց ոչ կոտորեցին զնոսա. այլ առեալ աւար զինչս նոցա. և զմարդիկն համարեալ եդին հարկս 'ի վերայ նոցա ըստ առլորութեանն իւրեանց մամ և թաղար. և թողեալ Ղահնա և զխասաւորս երկրին Հոռոմոց, և ինքեանք գնացին բաղում աւարաւ և գանձիւք և գերեօք, զոր առին յաշխարհէն Հոռոմոց յերկիրն արեւելից 'ի բնակութիւնս և յուրդդահս իւրեանց։

ԳԼՈՒԽ Է ։

Խորհուրդ եւ հարկաւորութիւն բարեպաշտ արքային Հայոց Հեթմոյ՝ Թաթարաց։

Իսկ բարեպաշտ և քրիստոսապսակ Թագաւորին Հայոց Հեթում հանդերձ ամենայն իմաստութեամբ լցեալ հարքն իւրով և աստուածապահ եղբարբքն և իշխանօքն 'ի խորհուրդ մտեալ՝ հաստատեցին 'ի միտս իւրեանց հնազանդել Տաթարին և տալ հարկս և խալանս, և ոչ թողուլ զնոսա յաստուածաշէն և 'ի քրիստոնէադաւան երկիրն իւրեանց. զոր և արարին իսկ։ Վասն զի յառաջագոյն տեսին զԲաչոյն զգլխաւորն զօրաց Տաթարին, և հաստատեցին դաշինս սիրոյ և հնազանդութեան. և ապա զկնի այնորիկ առաքեցին զեղբայր Թագաւորին զսպարապետն Հայոց զպարոն Սմբատ առ Սային Ղանն (Շահին Խա՛ն), որ էր նստեալ 'ի յաթոռ Չանկզ խանին։ Եւ երթեալ ըստ յաջողելոյն Աստուծոյ ետես ըզՍային Ղանն այն յոյժ քրիստոնէասէր և բարեսէր։ Վասն այնորիկ ազգն իւրեանց անուանեցին զնա Սային Ղան. որ է ըստ լեզուին իւրեանց աղէկ և լաւ Ղան։

Եւ տեսեալ զսպարապետն Հայոց Սային Ղանն, յոյժ ուրախացաւ վասն քրիստոնէութեան հաւատոյն. և. եւս առաւել վասն կորովի և իմաստուն բանիցն՝ զոր խօսեցաւ սպարապետն Հայոց Սմբատ առաջի նորա. եւ

արարեալ զնա սղամիչ, և տուեալ մեծ խառ-
լախ և փայիղայս ոսկիս եւ Ցաթար խաթուն պատուախառոր. զի այն էր նոցա մեծ սէրն, որ զ՚ով սիրէին եւ մեծարէին, տային կին ՚ի պատուաւոր կանանցն իւրեանց. և այսպէս մեծ մեծարանօք պատուեալ զպարապետն Հայոց, յուղարկեաց յաշխարհս իւրեանց առաջի քրիստոսապսակ թագաւորին Հայոց Հեթմոյ. հրամայելով նմա գնալ առ ինքն և տեսանել զնա: Զոր տեսեալ բարեպաշտ թագաւորն Հեթում զպարոն եղբայն իւր զՍմբատ այնպիսի պատուով պատուեալ և մեծարեալ ՚ի Ղանէն, յոյժ ուրախացաւ յուրախութիւն մեծ. եւս առաւել ընդ գրեալն վասն ազատութեան երկրիս և վանորայցս եւ ամենայն քրիստոնէից:

ԳԼՈՒԽ Ը:

Դարձ եւ Թագաւորութիւն արքայորդւոյն Վրաց Դաւթի ՚ի կաղտոնաց ջանիւք Վարդամայ հրամանաւ մեծի Ղանին:

Իսկ քաջ և անուանի զօրքն Վրաց ոչ ունէին գլուխ թագաւոր իւրեանց ՚ի վաղուց հետէ. և դուստրն Լաշային Ռուսուդուքան մահուամբ փոխեցաւ յաշխարհէս. և Վիրք մնացին անտերունչք իբրեւ զհօտս, որոյ ոչ իցէ հովիւ: Այլ ՚ի նախախնամութենէն Աստուծոյ ընդ միս արկեալ զորդին թագաւորին իւ-

րեանց զԴաւիթ՝ որ էր 'ի բանտի 'ի Հռոմք. և ըմբռնեալ արս գլխաւորս 'ի զօրացն Հոռոմոց իշխանքն Վրաց, տարան առ Բուղայն՝ որ էր գլխաւոր Տաթարին, և ետուն չարչարանօք հարցանել զնոսա վասն Թագաւոր որդւոյն Դաւթայ. և 'ի նեղելն զնոսա հարցմամբ և սաստիկ գանիւ, որպէս սովորութիւն է Տաթարին, եկին 'ի խօսս, և ասացին թէ կայ յերկաթ և 'ի հուրի 'ի կեսարիա.

Եւ ապա յոյժ ուրախացեալ Վրաց իշխանացն առաքեցին զիմաստուն իշխանն Վարհամ՝ զտէրն Գագայ հրամանաւ Բուղային նուիրեն և այլ ամենայն գլխաւորաց Տաթարին. և ետուն զկնի Վարհամայ Տաթար գլխաւոր մի այլ հարիւր ձիաւորով. և յուղարկեցին զնոսա մեծ ոփառաթով 'ի կեսարիա: Եւ իբրև գնացին, գտան կամօքն Աստուծոյ զԹագաւոր որդին Դաւիթ 'ի մեծ և 'ի խոր վիրապի. իսկ կամքն Աստուծոյ պահեալ էր զնա կենդանի 'ի խոր բանտին. և իբրև ետեսին զօրք Տաթարին և մեծ իշխանն Վարհամ՝ 'ի հիացման եղեալ վասն կենդանութեան նորա, ետուն փառս Աստուծոյ.

Եւ էր Դաւիթ որդի Թագաւորին Վրաց երկայն հասակաւ և կորովի, գեղեցիկ պատկերաւ և Թուխ մօրուօք. լցեալ ամենայն իմաստութեամբ և շնորհօքն Աստուծոյ.

Եւ ապա հանեալ 'ի բանտէն, ագուցին նմա հանդերձս պատուականս. և հեծուցեալ յերիվարս առին և գնացին յաշխարհն Վրաց: Եւ յորժամ հասին 'ի քաղաքն Տփխիս, յոյժ ուրա-

խացան իշխանքն Վրաց. և առեալ հրաման 'ի Բաչոյն նուինէն և յԱլթանա խաթունէն Զաւրմաղանին (զի ընդ այն աւուրս մեռեալ էր Զաւրմաղանն, և կինն ունէր զիշխանութիւնն) , որ եւ հրաման էհեծեալ զկնի մեծ իշխանին Վարհամայ. և առաքեաց առ մեծ Ղանն ։ Եւ գընացեալ օգնութեամբն Աստուծոյ և տեսեալ զՂանն պատմեցին զեղեալ իրսն վասն Թագաւորորդւոյն. և առին հրաման 'ի մեծ Ղանէն, բերին նստուցին զԴաւիթ յաթոռ հօրն իւրոյ 'ի Տփխիս ։ Եւ իշխանքն Վրաց յոյժ ուրախացեալ անուանեցին զնա Վարհամուլ Թագաւոր. այսինքն Վարհամէզիր Թագաւոր։ Եւ առ ժամանակ մի խաղաղացաւ երկիրն Վրաց և Աղուանից վասն նոր Թագաւորին նստելոյ ։

ԳԼՈՒԽ Թ.

Մահ Զաւրմացանին ։ Տ. կոստանդին կաթուղիկոս Հայոց ։ Պարոն կոստանդին նախկին Թագաւոր Հոյոց հայրն Հեթմոյ ։ Դաւիթ արքայ Վրաց մատնի յիշխանացն իւրոց։ Մեռանի Վանական վարդապետ ։

Իսկ Զաւրմաղանն մեռաւ բարի խորհով. և եթող երկուս որդիս յԱլթանա խաթունէն կնոջէ իւրմէ. անուն միոյն Սիրամուն, և երկրորդին՝ Բաւրայ ։ Եւ էր Սիրամունն բարի 'ի մանկութենէ իւրմէ սիրող քրիստոնէից և եկեղեցւոյ. և կամօքն Աստուծոյ յաջողեալ 'ի

գործ պատերազմի. մինչ զի վասն կարի քաջու-
թեանն՝ Ղանէլին Ոսկի ոչն անուանեցին զնա
յետ բազում յաղթութեանց և պատերազմաց։
Իսկ եղբայր նորին վասն չարութեան բարուց
իւրոց սպանաւ 'ի Հուլաւու Ղանէն։

Յայսմ ժամանակի հանդիսանայր պայծառ
և առաքինի վարուք հաճոյ Աստուծոյ և մարդ-
կան Տէր Կոստանդին կաթուղիկոսն Հայոց,
հանդերձ քրիստոսապսակ Թագաւորաւն Հե-
թումաւ. որ և լուսաւորեցին ուղղափառ հա-
ւատով և պայծառ կարգօք զամենայն եկեղե-
ցիս Հայաստանեայց յարեւելս և յարեւմուտս
և յամենայն տեղիս։

Իսկ Թագաւորահայրն պարոն Կոստանդինն
հանդերձ այլ աստուածատուր որդւովքն եւ
իշխանօքն կայր վառեալ ընդդէմ զօրաց այլ-
ազգեայն և թշնամեաց խաչին Քրիստոսի. և
պահէին յուրախութիւն հանապազ զբարե-
պաշտ և զքրիստոսապսակ Թագաւորն Հայոց
զՀեթումն. հանդերձ գեղեցիկ և պատուական
զաւակօքն իւրովք Լեւոնիւ և Թորոսիւ։

Իսկ բարեսէր և գեղեցիկ Թագաւորն Վր-
րաց Դաւիթ հանապազ իւր ամենայն Թագա-
ւորութեամբն կայր 'ի մեծ ուրախութեան եւ
'ի դինարբուս յիւր Թագաւորանիստ քաղաքն
Տփխիս։ Եւ յաւուր միում էր մեծ ճաշ եւ
ուրախութիւն առաջի Թագաւորին. և սովո-
րութիւն է Վրաց հանապազ ամբարտաւանել
և մեծամեծ բանս խօսել։

Իսկ մի յիշխանացն Վրաց համարեալ ա-

ռաջի թագաւորին զայլ իշխանսն և ասաց զթիւ իշխանացն հազար ։ Եւ կայր յիշխանացն՝ որ ունէր հազար ձիաւոր պատերազմող, կայր՝ որ ունէր հինգ հարիւր ․ և անկաւ բանս այս ՚ի լուր ամենայն թագաւորութեանն , յորժամ եկին անուշացեալ յուտել և յըմպելն ։ Եւ յորժամ հաշուեցան ¦ և համար արարին զօրացն Հայոց և ։ բաց՝ ասացին զկուրեանցն յաղթող լինել ՚ի վերայ զօրաց Տաթարին ․ և բաժանեցին ըզ-գլխաւորսն ՚ի վերայ իւրեանց ․ և այս ոչ թէ ուղորդ խորհեցան և կամ խօսեցան , այլ առ կատակասն ․ զի պարապ և անհոգ էին ՚ի ցա-ւոց , և այլ թշնամի ոչ գոյր յերկիրն արեւե-լից ․ բայց միայն Տաթարն ․ որ յամենայն ժամ գային և հարկաւ նեղացուցանէին զՎրաց և զՀայոց իշխանքն ․ յամենից ուզէին ոսկի կռաւ ․ յամենից՝ բաղայ , յամենից՝ աղէկ շուն և ձի ․ և այսպէս նեղացուցանէին զնոսա վասն ՚ի մալէն և ՚ի թաղարէս և ՚ի խալանէն ․ վասն այնորիկ խօսեցան զայս ․ բայց ոչ ուղորդ , այլ ընդ խա-ղս և ընդ կատակս ։

Իսկ մի ոմն յայնցանէ որ անդն կային , Նմա-նեալ Ցուդայի մատնչին , գնաց և մատնեաց Տաթարին ․ զսուտ բանն իրաւ և ուղորդ դար-ձուցեալ այսպէս ասելով ․ թէ Վրաց թագաւորն և իւր իշխանքն խորհեցան գալ ՚ի վերայ ձեր ։

Իսկ նոցա աւատացեալ սուտ բանիւն , դար-ձան ՚ի վերայ աշխարհին յաւարի առեալ զա-մենայն ինչս և զխաշինսն ․ բայց զմարդիկն ոչ կոտորեցին առանց հրամանի մեծ Ղանին ․ և

ըմբռնեցին զԹագաւորն և զամենայն իշխանսն ազգէ . մինչ ՚ի յայնս ևս զինու իշխանն Վրաց զօր-գի Աթաբակ Իւանէի Աւագ անուն , տարան տա. Գուրս զիշխանութիւն դադարողք . զի ընդ աւուրսն ընդ այնոսիկ հիւանդացեալ էր և ոչ կարէր նստիլ ՚ի ձիոյ . Եւ թէպէտ այլ իշխանքն և Թագաւորն շատ խօսեցան , ոչ աւատացին խօսից նոցա . և ՚ի գերելոյ և յաւարելոյ զաշխարհն ոչ դադարէին : Եւ յորժամ տարան զԱւագն դադարողք ՚ի դուռն գլխաւորաց Տաթարին , ապա նորա խօսիցն աւատացեալ Թողացուցին զաշխարհն ՚ի կոտորելոյ , և զաւարին խաղաղութիւն սրտաբեկ և աղքատեալ ՚ի բնակութեանցն

Ընդ աւուրսն ընդ այնոսիկ փոխեցաւ ՚ի Քրիստոս աւագ և փառաւոր վարդապետն մեր Վանական , և առաք մեծ եթող մեզ . և ոչ թէ միայն մեզ աշակերտելոցս նորա , այլ և ամենայն աշխարհիս . որոյ յիշատակն նորա օրհնութեամբ եղիցի . և աղօթք նորա ՚ի վերայ ամենայն աշխարհի և ամենայն քրիստոնէից .

ԳԼՈՒԽ Ժ.

Մարախ։ Գլխահամար յարեւելեաց Հեթում ար-
քայ Հայոց գնայ առ Մանկու Ղանն, եւ մե-
ծարի դառնալով։ Եւթն որդիք եւթն Ղանաց։
խուժ ամբարշտութեան։ Տ. Ստեփաննոս կանա-
հայր Գերեթնի վանաց մարտիրոսանայ։ Հիւ-
սանդանայ խուլ. եղեն նագործութիւնք ՚ի դառ-
ճառս նորա։ Յաջորդէ զխուլ Միջան որդի նորա։

*Իսկ ՚ի յաւուրսն յայսոսիկ եկն մարախ սաստ-
իկ և եկեր զամենայն աշխարհն արեւելից.
մինչեւ առ հասարակ երկիրս ամենայն յարե-
ւելք և յարեւմուտք ՚ի յանհէն զարհուրեալ
յԱստուած ապաւինեցան մեծաւ հառաչանօք.
և այս ողորմութեամբն Աստուծոյ զերծաւ
աշխարհ ՚ի յանհագին ցաւմանէն. և ետուն
փառս Աստուծոյ ամենակալին փրկողին յայն-
պիսի պատուհասէն։ Եւ այս եղեւ ՚ի Թուա-
կանութեանս Հայոց յեւթն հարիւրին (1251).*

*Եւ զկնի ցաւմանս այսորիկ եկն գլխաւոր
մի Տաթար Արղուն (1) անուն հրամանաւ Մանկու
Ղանին. և համարեաց զերկիրն արեւելից վա-
ղըն հարկի. և առանուին այնու հետեւ զհարկն
՚ի գլխաւթույ մարդկանն, քանի որ գրեալ լի-
նէր ՚ի դաւթարն (2). և այսպէս այլ աւերեցին
զաշխարհն արեւելից. զի ՚ի մի փոքր գեղն յի-
սուն մարդ համարէին, կամ երեսուն. ՚ի սասն*

(1) Մի գի. Արղուն։ (2) Տոմար։

և հինգ տարեկանէն 'ի վերն զամենն համարէին մինչ 'ի վաթսուն տարեկանն . և յամէն գլխոյ որ համարէին, վաթսուն ապխտակ առնուին . և թէ որ փախչէր կամ թաքչէր , յորժամ ըմբռնէին կապէին անողորմ ձեռս 'ի յետս և զաւուր պա-տուհանօք ծեծէին՝ մինչ զի մարմինն ամենայն այրէր և յարենէն շաղախէր . և ապա անողոր-մաբար զկատաղի շներն իւրեանց , զոր սովորե-ցուցեալ էին ուտել միս մարդոյ , 'ի ներս թո-ղուին և ուտել տային զտառապեալն և զչուառե-լոց քրիստոնեայսն ։

Իսկ քրիստոսապատակ և բարեպաշտ թա-գաւորն Հեթում , իբրև լուաւ զայս ամե-նայն բարկութիւնս որ գործեցաւ 'ի վերին աշխարհն արեւելից , այս վասն սիրոյ քրիս-տոնէից եւս առաւել վասն իւր սեպհական եր-կրիս , գնաց բազում գանձիւք առ Մանկու Ղանն , և հայցեաց չթողուլ յերկիրս իւր զայս-պիսի բարկութիւնս ։ Եւ յորժամ հասաւ առ Ղանն . կամօքն Աստուծոյ մեծարեցաւ 'ի Ղա-նէն ։ Եւ արարեալ Ղանն մեծ պատիւ և հար-կիս թագաւորին Հայոց , և զամենայն բանն նորա հաղաց ըստ կամաց նորա . և դարձոյց մեծ ազատութեամբ յաշխարհն իւր ։

Իսկ զկնի այսորիկ և հաւանելոյ թագաւո-րին Հայոց յեւթն հարիւր և 'ի վեցն , եկին յարեւելից ուստի մեծ Ղանն էր՝ եւթն Ղանք որդիք . ամենեքեան զաւակն մի հեծելով . և մի զաւակն էր երեսուն հազար ։ Եւ էին անուանք նոցա այս . առաջին և մեծն 'ի նոցանէ Հուլա-

ռու. որ էր եղբայր Մանկու Ղանին. երկրորդ
խուլին՝ որ և զինքն եղբայր Աստուծոյ ասէր և
ոչ ամաչէր. երրորդն՝ Բալախէն. չորրորդն՝
Տութարն. հինգերորդն՝ Թագուդարն. վեց-
երորդն՝ Ղատաղանն. եւթներորդն՝ Բու-
րաղանն. և էին սոքա անհնազանդք միմեանց
և յոյժ անօրինեալք և մարդասպանք. Իսկ 'ի զաւէն
որ եկին ամենայն կռուօք եկին. և կռուօք չըքե-
ին. մինչ զի զերամն և զբարս հարթեին աշ-
խարհանն ապականելոց վասն հեշտ զինուրյ կառա-
ցին և սայլիցն.

Իսկ այն գլխաւորին որ զինքն եղբայր Աս-
տուծոյ ասէր, եկն ընդ մէջ երկրին և կոխեաց
անօրէնութեամբ զատուածապաշտ քրիստոնէայսն. և
զքրիստոնեայ խաչ տուր և զատանէին 'ի ճանապար-
հըս և 'ի լերինս կանգնեալ. զամենեան այրէին.
և աչքինչ իրօք ոչ յագենային. այլ և զվանորայսն
որ կային յերկիրս տուր և զատանէին ասուել
եւս կոխեին ուտելով և ըմպելով. և զզար-
ուաւորն քահանայսն կոխեին և ծեծեին անո-
ղորմաբար.

Իսկ գլխաւոր մի 'ի խուլին հեծելոցն զըն-
աց 'ի վանքս մի որ ասի Գետիկ թիւն. և էր հայր
վանիցն այր մի և ծեր յոյժ ընտրեալ և առաքի-
նի առաքինիք և անեեայն վարուք և բարի գոր-
ծով կատարեալ Մանէտմանեան անուն. և նա յառ-
աջ եկաւ զգլխաւոր Տաթարին որ գնայր առ
նա 'ի վանքն. եառ զինք անժամով ինչ. և զը-
նաց ընդ զեմ Տաթարին. և բանեաց ասացու
ողորմեա առաքութիւն և Տաթարին. Եւ ասաց

յետ այնորիկ առաքեալ 'ի վանիցն և նստուցեալ հանդերձ այլ հեծեծելովքն, որ կարգին ընկեր զգլխաւորին, և զծնեալս աշխար. և երբեմն այլ զգինի, և յաղեցուցց ուտելով եւ ըմպելով զանձինս. մինչ զի բռ ին կարգին զաղաւթել 'ի ժամուն. և յերեկոյին արբեալ զնայցին 'ի սուրբ խորանին. զի հաւատ առ վանիցն էր սուրբ Յարութեանն.

Իսկ յորժամ հասանին 'ի սուրբ խորանին և նմջեցին զգիշերն, ընդ առաւօտն զարթուցեալ առեալն զգլխաւորին հրեանն յայժ. և յորժամ հարցին թէ վասն ի՞նչ պատճառի է հեռանալութիւնդ, ասաց գլխաւորն, թէ երեցն զերգեաց զիս յերեկոյն. և էր անմեղ երէցն. բայց վասն խաբեր և անկանգ ըմպելոյն խորանին այնպէս համարձակեցաւ. Իսկ առ ժամայն յուզարկեցին և կապանօք առաքեն զհրաշալի ծերն զհայրն Սարկաւագն. և յետ շատ հարց և փորձի, և նոցա ոչ ունելով, 'ի շղթից կապանաց փոյթ ցցեցին, և արկեցին անհաղորդութեան զանդապատն 'ի յայն բանն 'ի դեռանոյն բարձր իբրև կանգնոյ շափ. և աղա հօրք վասն եալ 'ի ներքոյ այլեցին և խորտակեցին զանձինսն մարմինս նորա. մինչև առանձնեալ զհոգին հրաշալի ծերն Սարկաւագնոս. և յայտնապէս նշան և ոտւն լու-սոյ առ-ին 'ի վերայ երանելի հօրն Սարկաւագնո-սի, որ այնպէս անմեղ և 'ի զուր նահատակե-ցաւ, և ընդ սրբոց մարտիրոսացն դասակեցաւ.

Իսկ պերճն և անօրէն գլխաւորն այն զատ 'ի ցաւէն որ ունէր, հալածեալ 'ի դիւէ. մինչ զի կատաղեալ ուտէր զիւրն մարմինն իւր. և այն

պէտք շարշարանօք և գաւան հարուածովք առա-
ւականեցաւ. Նոյնպէս և ամենայն բանակն ամենայն
'ի շար ածեալ. և բաղումք սատակեցան 'ի նո-
ցանէ։ Եւ թէպէտ այս այսպէս գործեցաւ,
Նոքա ոչ վախէին յԱստուծոյ. այլ յաճախեալ
հանապազորդ զխաղծի և զզաւրն ապստամբութեան բանս
գործէին. զի մեծ գլխաւորին իւրեանց խուլին
այն' որ ամբարտաւանեալ նման և եղբայր Աս-
տուծոյ ասէր զինքն, անկաւ նա 'ի ցաւ նկըր-
ոյ. և այն ցաւոյն ապաշխարութեան անհատանելի
խեղձ և ողորմ բանս գործեցաւ։ Զի զնացին
անհնարին ընդ մի բժիշկ գաւառ, և բերին
առ խուլն. և յորժամ եկեալ զցաւ նորա անարէն
և տեսեալ բժիշկն այն. ասաց' դեղ ցաւ ին. զձեկ
ազգակն փոքրն կենդանանայն ձեղքել, և դնել զցաւն
'ի փոր տղայոյն։ Եւ նոյն ժամայն հանեալ հե-
ծեալ յերկիր, յանկարծակի մեռանէին 'ի գե-
ղանն ընկաանէից և առնուին զտղայսն 'ի փո-
ղոցէն. և գայլք այլեւ փախուցանէին. և ծը-
նողք մանկանցն պկնի զնոյին ձիչ և աղաղակ
բարձեալ գաւառն և աղորմ արտասուօք. և ոչ
կարէին թափել. այլ յետոյ դարձեալ զնոյին
ողորմելի արտօք 'ի տունս իւրեանց. և թէ
բռնադատեալ կէին զմանկունսն, յայնժամ
նետաձիգ լինէին 'ի ծնողս մանկանցն. և այս-
պէս ողորմելի բանս եղեւ 'ի ձեռն անօրէն
Ջհուդին. մինչ զի յերեւումն տղայն հասեալ թը-
ւով որ ձեղքէին զփորն, և ոչ լաւացաւ։ Այլ
իբրև զխոզ անօրէն խուլն թէ այնչափ խեղ-
ձըս գործեաց և ոչինչ օգտեցաւ, ապա յետոյ

բարեկացեալ վասն խաղաղի տգայոցն. հրամայեաց բերել զՉենատ հեքիմն. եւ իւրեան առաջի ձեղքել զփորն եւ ընկենուլ շանց. եւ առ ժամայն արարին զհրամայեալն: Բայց ինքն Խուլին յետոյ այլ ստատակեցաւ չար մահուամբ, եւ նորա սա 'ի տեղի Խուլին Ապաղան անուն որդին իւր

ԳԼՈՒԽ ԺԱ.

Առումն Պաղտատայ եւ գերութիւն խալիֆա-յին: Անձնատուր լինի եւ քաղաքն Մարտինո-սաց: Այլ աւուրք ատամբերգոյն Բաղդատուցիներ:

Յետ այսորիկ արարին ժողով մեծ Հքն եւ նոր հեծելոց եւ Վրաց եւ Հայոց հեծելոյն, եւ անթիւ բազմութեամբ գնացին 'ի վերայ Պաղտատ քաղաքի. եւ յորժամ հասին 'ի տեղին, առ ժամայն առին զքաղաքն մեծ եւ անուանի զՊաղտատն, լցեալ բազում մարդովք եւ պատուական գանձիւք եւ անթիւ ոսկւով եւ արծաթով. եւ յորժամ առին, յանխնայ կոտորեցին եւ գերեցին զբազումս. եւ լցան առ հասարակ հեծեալն ամենայն պատուական հանդերձիւք եւ խալիֆաաւ ոսկւով: Ըմբռնեցին եւ զխալիֆայն զտէրն Պաղտատայ իւր ամենայն գանձիւքն, եւ բերին առաջի Հուլաւունին զխլացած եւ մնկքացած. եւ յորժամ եհես Հուլաւուն հրամայեաց, թէ դու ես տէրն Պաղտատայ. եւ նա ասաց թէ ես եմ. եւ ապա հրամայեաց դընել 'ի քաւանի զերկաթ որ անհնար եւ անձրոր. եւ

յետ երկից աւուրն հրամայեաց բերել առաջի իւր , և եհարց Հուլաւունն զխալիֆայն , թէ ի՞նչ ցեղ կաս . և նա ցասմամբ պատասխանի ա- րարեր , իբր թէ վախեցնելով զՀուլաւունն , ասէ . ա՞յդ է ձեր մարդութիւնն , որ ես երեք օր յա- նօթի կենամ . զի յառաջագոյն ասացեալ էր խա- լիֆայն ցքաղաքացիսն թէ մի վախէք . թէ լի- նի , ու Տաթարն գայ , զՄահմետի գրոշենն 'ի դուրս բերեմ , որ Տաթարին հեծեալն ամէն անհետ և մէջ ապրէինք . և զայս լուեալ էր Հու- լաւունն և յոյժ բարկացեալ . և ապա հրամա- յեաց Հուլաւունն , տապալ մի կարմիր ոսկի բերել և դնել առաջի . և յորժամ բերին , ա- սաց խալիֆային , այս ի՞նչ է . ասաց Հուլաւունն , թէ ոսկի է , կեր , որ քաղցդ և ծարաւդ ան- ցանի , և կշտանաս : Ասաց խալիֆայն . թէ ու- տելով ոչ ապրի մարդն . այլ հացով և մսով և գինով : Ասաց Հուլաւունն ցխալիֆայն . երբ գիտես զայդ , որ մարդն չէր ոսկւով չապրի , այլ հացով և մսով և գինով . դու այդչափ ոսկի էր չուղարկեցիր ինձ ընդդէմ , որ ես չէի եկեալ , ու զքո քաղաքս աւերեալ , ու զքեզ կալեալ . ու դու քեզ անհոգ նստեալ էիր կե- րեալ և խմեալ : Եւ ապա հրամայեաց Հուլա- ւունն զօրացն ասիւք ունել և այնպէս սպանանել զխալիֆայն Տաճկաց : Եւ գնացին բազում գան- ձիւք և աւարաւ յաշխարհն արեւելից :

Եւ 'ի գալ ամին եկին 'ի վերայ Մուփարղի- նին . և ոչ կարացին առնուլ զնա . զի առաջագոյն շինեալ էր զնա սուրբն Մարութայ քաղաքս մար-

տիրոսաց. և ամենայն սպասք ժողովելոց Նշխարաց և եդ ՚ի նմա. և ամբարձողիս պատարագեաց զնա, և անուանեաց զնա քաղաք Մարտիրոսաց. որ մինչեւ ՚ի ժամանակս Տաթարաց, այլ որք ոչ կարաց տանել զնա առանց արեան: Եւ ապա երկայնաժամեա զօրք Տաթարին ՚ի հեռաւոր աշխարհէ, մինչ ՚ի սաստիկ կերպաւ ամենեքեան զինեալ. և աւերէին Թէ իշխան գլուխ մի եղեւ. յերկրպագեն զքաղաքն. և այսպէս Նեղութեամբ ՚ի հեռաւոր աշխարհաց զերրիս առեալ կալան զքաղաքն Մարտիրոսաց. որ և Հայոց զօրքն որ կային ընդ Տաթարին բազում Նշխարս տարեալ ՚ի սրբոցն առաքեալ յաշխարհն իւրեանց :

Իսկ մեծ իշխանն Հայոց Թագաւորին անուն յազգէն Բագրատունեաց ընդունեալ երկիր մի Ասորի և ՚ի խոսա ածեալ, եգիտ զոմն սուրբ առաքեալ յուն Բարդուղիմէոսի. և տարեալ մեծաուրախութեամբ յաշխարհն իւրեանց յարկ: եդր և եդ ՚ի վանս իւր: Եւ յետոյ հանգեալ ՚ի մեծ իշխանէն Արծրունեաց՝ որ առին Վասպուրական եւ նմին. և առեալ Վասպուրականի աւերին Հայրապետաց մեծ և Հաւաքականոր սրբոյ առաքելոյն. եդ զմասունս մին Բարդուղիմէոսի առաքելոյն ՚ի սուրբ առաքեալ Հայաստան. և է անդ առաւ զայոկս :



ԳԼՈՒԽ ԺԲ.

Նամի Ղան Հուլաւուն հրամանաւ Մանկու Ղանին, անհնազանդութիւն եւ դառնիծ չորիցն՝ յեւթանց որդւոց եւթն Ղանացն. Կրկին ըմբերչք եւ ըմբշամարտ:

Իսկ եւթն Ղանին որդիքն որ եկին և առին զՊաղդատ քաղաքս, և լցան բազում զանձիւք ոսկւով և մարգարտով, ոչ հնազանդէին միմեանց, այլ կային ամենայն զինուոր իւր սրտովն մեծ, և անհնար առնէին և կոխէին զաշխարհն արեւելից:

Իսկ մեծ իշխանն և անուանի 'ի նոցանէ ո-րում անուն էր Հուլաւու, և էր սա եղբայր Մանկու Ղանին, որպէս յառաջագոյն ասացաւ: Սա յուղարկեաց առ Մանկու Ղան եղբայրն իւր 'ի բուն արեւելք, և այսպէս պատուիրեաց զնացեալցն. Թէ մեք եկաք այս եւթն զօրաւա-զլուխքս Աստուծոյ և ձեր ուժով, և զհին հե-ծեալն զԹեմուչեան հանաք առաջի, և զնացաք առ. զՏաճկաց քաղաքն զՊաղդատ, և շատ իրաց գործեցաք Աստուծոյ և ձեր ուժով: Հիմ այլ ի՞նչ հրամայեք մեզ. թէ այս յեղ անգլխաւոր և անզգլխաւոր կայցուք, այս աշխարհս առ իրի, ու Չանկըզ Ղանի հրամանքն չլինի. զի նա հը-րամայեաց զմեզ հնազանդեալ և զմեր սիրով կալեալ զաշխարհն չինել, և ոչ աւրել: Եւ այլ հրամանն առ ձեզ է, զինչ մեզ հրամայէք, մեք զայն առնեմք: Եւ այսպիսի խօսիւք զնացին

եկեղեցին առ Մանկունս Ղևոնդ 'ի Հաւատովքն :

Եւ յորժամ հասին 'ի տեղին եկեղեցականացն Մանկունս Ղևոնդ զերդերորեն. և Նոքա առաջին ըղհրամանեալսն 'ի Հաւատովքն : Իբրև լուան զառաջեալսն Մանկունս Ղևոնդ, առաջս հրամանեալս իւրոց արդարուչեացն, պայծառացն զատաստանօրացն, թէ գնացէք և գրեք զհաւատաւոնն զերդերոյն իմ Ղևոն յերկինքն յայնժամ որ ոչ հնազանդեցան յառաջին հաւատացէք մեր հրամանաւ. իսկ եկեղ արդարուչեացն հրամանաւ Մանկունս Ղևոնդեանցն մեծ խոստովանութեամբ, և կոչեցին զամենեն զվկայութիւն որ եկեղ եկին զգիրն Հաւատոյն. կոչեցին ըղՎ.քայ թագաւորն իւր Կեծեկրոնին. կոչեցին ըղթագաւոն իւր Կեծեկրոնին. և եղին բանս ծածուկ 'ի լանկէս Նոցա. և 'ի մերայ սպասւորին կոչեցին առ զուշեր Մանկունս Ղևոնդին մեծ եղ չոր զՂևոնի որո գիրքն. զԹալիսիկեն, զՏուօթայն, զՂևասոսանն, զԹաւաքացանն, զԹասպաուրայն, զՄիպանն, որ էր որոգի խուլին : Եւ իբրև անենն 'ի միաստին ժողովեցան, յայնժամ առաջին պարզանչեցին զհրամանեալսն 'ի Մանկունս Ղևոնդն : Իսկ իբրև լուան Ղևոնի որդւոցն թէ Հաւատոյն կամի Ղևոն նուագել բարեկարգն չարան և ոչ կամեցան հնազանդել Հաւատոյն. Իսկ Թագաւորեալն և Թագաւորն հնազանդեցան Հաւատոյն. և Թաւաքացանն, և Տուօթայն, և Ղևասոսանն, և Միպան ոչ հնազանդեցան : Իբրև զփառացն առղաս չէր Մանկունս Ղևոնդին, թէ այս չարաս չէն հնազանդեալոց. այլ կամին կալուել ընդ Հաւատունոյն. առաջ հրամանեցին զԹալիսիկեն, և զՏուօ

[illegible] յ[illegible] հաստատ[illegible]-
[illegible] խնդրել. զի նոքա որ էին
է [illegible] բայց Միրզանն որ
էր որդի [illegible] և էր [illegible], զնա կալան
և եդին ի բանտի ի մէջ ծովուն, որ կայ ի
Հեր և ի Զարաւանդ գաւառս, և [illegible]-
[illegible] Ղ[illegible] Հայոց և
[illegible]
[illegible] ի [illegible] և [illegible]
[illegible] և [illegible]
[illegible] ի [illegible]
[illegible]
[illegible] և [illegible] Ա[illegible]-
[illegible] և [illegible]
[illegible] և [illegible]
և [illegible] և [illegible]
[illegible] որ [illegible] և [illegible] ի
[illegible]
[illegible] և [illegible]
[illegible] որ էր [illegible] Ղ[illegible], և
[illegible] բայց
[illegible] Մ[illegible] Ղ[illegible] որ [illegible]
[illegible] Ղ[illegible]
[illegible] զի
էր [illegible] Ղ[illegible]
[illegible] և [illegible]
և [illegible] Յ[illegible] զի [illegible]
[illegible] էր և [illegible] և
[illegible] և [illegible]
[illegible] և Ա[illegible]. մինչ զի [illegible] և

ժամանակաց չքմեղացուցանէր զինքն ինքեան, և բռնա-գրաւ տիրանայր Հայոց և Ասորւոց.

Իսկ լուեալ զայս բարեպաշտ թագաւորն Հայոց Հեթում. թէ Հուլաւուն Ղանն Տատար և ազնուական բարեսէր է, և քրիստոնէասէր. ապա և ինքն Հայոց թագաւորն գնաց յարեւելս բա-զում ընծայիւք, և եհաս զՀուլաւուն Ղանն. և տեսեալ Ղանն զՀայոց թագաւորն յոյժ սիրեաց և պատուեաց զնա. և կրկին ազատութիւն զը-րեաց թագաւորութեանն նորա. և ետ առաւել եկեղեցեաց և եկեղեցականաց, և ամենայն քրիս-տոնէից երկրին: Եւ այսպիսի պատուով և մեծաւ հարկեօք առաքեաց զթագաւորն Հայոց յաշխարհն իւր: Այլ և բազում թագաւորք և Սուլտանք եկին նմա ի հնազանդութիւն բա-զում ընծայիւք. և մեծացաւ Հուլաւուն Ղանն և հարստացաւ այնքան որ ոչ գոյր թիւ հեծելոց և զօրաց նորա. նոյնպէս և ամենայն իրօք. զի պատուական ակն և մարգարտին իբրև զաւազ ծովու էր առաջի նորա. թող զայլ ցեղ մեծու-թեան և բազմութեան ոսկւոյ և արծաթոյ. և ձիոց և հօտից, որոց ոչ գոյր չափ և թիւ:

Իբրև գիտաց Հուլաւուն Ղանն թէ ետես նմա Աստուած զանունութիւն և մեծութիւն և բազ-մութիւն զօրաց և հեծելոց և զամենայն ընչից. Յայնժամ հրամայեաց դարբասս շինել իւր մեծ ծախիւք ի Դաւոն դաշտին զոր [illegible] իւրա-եանն զանուն տեղւոյն Ալատաղ. որ էր զառաջինն տեղին այն նստոց ամառնային մեծ թագաւորացն Հայոց. այսինքն Արշակունեացն: Եւ էր [illegible]

Հուլեանու Ղեւոնդ Մեծախելքն, մեծամտին դատա-ւոր ամենեւին փիտուն՝ յոյժ արիւնահեղ. բայց զչարսն և զթշնամիսն սպանանէր, և ոչ զբարիսն և զբարեսէրսն։ Սիրէր առաւել զազգ քրիստո-նէից քան զայլազգեաց։ Եւ այնչափ սիրեաց զքրիստոնեայսն, որ զմի տարեան հարկն թող ե-տու 'ի Հայոց գանձեմայր հարիւր հազար. և յա-մէն տաճիկ քաղաք երկու հազար թող առա-քեաց և հրամայեաց դնել տաճիկ խաղարանս, և յամէն շաբաթ դիր մի սապոնով լուանալ. և զատ 'ի յարօտոյն, ամեն վաղ 'և երեկոյ տալ նուշ և ամպլուա խոզերն ուտելոյ. և տաճիկ մարդ ե-թէ մեծ և եթէ-փոքր որ ոչ ուտէր միս խոզի, գլուխն կտրիւր։ Եւ այսպէս պատուէր զՏաճ-կունքն. և այս եղեւ 'ի խրատուէ զօրացն Հայոց և Վրաց զի յոյժ սիրէր Հուլանու Ղեւոնդ զզօրքն Հայոց և Վրաց. վասն կարի քաջութեան իւ-րեանց, զոր առնէին առաջի նորա յամենայն պա-տերազմունս. վասն որոյ Բահատուրս անուանե-եաց զնոսա. զի զգեղեցիկ և զերիտասարդ որ-դիս մեծ իշխանացն Հայոց և Վրաց ընտրեաց և կացոյց դռնապանս իւր, և անուանեաց զնոսա Քէշիկ Թոյք. որ են դռնապանք սրով և աղե-ղամբ։ Սկսաւ և զաւէր տեղիսն շինել. և յա-մէն չէն գեղէ, մէկ տուն որ հանէին. 'ի փոքրէն մէկ, 'ի մեծէն երկու կամ երեք. և անուանեաց զնոսա Խան։ Եւ առաքէր զնոսա յամէն աւեր տեղիսն առնել շինութիւն. և ամենեւին հարկ ոչ տալ, բայց միայն հաց և թան Ճանապարհորդ-աց. Տաթարին։ Այսպիսի կարգաւք հաստատեաց զերկր

ղանութեան աթոռն. և ինքն նստաւ յուտել և յըմպել բազում ուրախութեամբ։

Ընդ աւուրսն ընդ այսոսիկ եկն այր մի 'ի Մանկու Ղանէն Մուղալ ազգաւ, և էր այրն այն յոյժ ահագին տեսողացն, երկայն հասակաւ թիկնեղ. չինին զերդ զգոմիշու, ձեռներն անձոռնի իբրեւ պարզու, և ամեն օրին ուտէր ոչխար մի. և ունէր 'ի Մանկու Ղանէն 'ի հետ գիր և անգին կապոյ մի. և գրեալ էր 'ի գիրն այսպէս. Այս անուն բանքայ երեկ առ իմ եղբայր Հուլաւու Ղանդ, թէ լինի ոք բանքայ որ զդա ձգէ, զայդ կապոյդ նմա հայցո. ապա թէ իմ Բուքայդ ղքոյնն ձգէ, յայնժամն զկապայդ զմա հայցո. և մեծ ելչեով յիս յղարկեա։

Յայնժամ Հուլաւու Ղանն կոչեաց զամենայն գլխաւորս զօրաց իւրոց. և հրամայեաց թէ գիտէք մարդ Տաճար կամ Հայ կամ Վրացի, որ զդա ձգէ. և որոնեցին 'ի Տաճար ոչ գտին. զի ով տեսանէր զայրն զայն՝ ամենայնն վախէին յահաւորին հասակէն և 'ի տեսոյ նորա։ իսկ Հայոց և Վրաց իշխանքն ասացին թէ մեք գիտեմք մարդ. որ միթէ 'ի նմանէ լինի ճար. և հրամայեաց Ղանն փութով բերել. և ասացին թէ չէ 'ի անդս, այլ կայ 'ի տուն իւր. և հրամայեաց առժամայն ելչեաց շուտով հասուցանել. բայց ոչ ձիով. այլ սայլով։ Եւ էր այրն այն զոր ասացին Հայոց և Վրաց իշխանքն, յազգէն 'ի Բարձր Արծրունեաց թոռն Ամիր Քրդին. Սադուն անուն. երկայն և վայելուչ հասակաւ. յոյժ ուժեղ 'ի մանկութենէ և փորձ և կիրթ

՚ի գործն յայն. բայց տաւղի Դաւթին. այլ չէր բանել մարդ։

Յայնժամ իբրեւ գնացին ելչիքն, և տուացին զհրամանք Դաւթին, արտմեցաւ Սադունն. զի տաւղի Դաւթին այլ ոչ էր բանեալ մարդ. և մի այս, որ անհաւատին և ուժով լռեաց զհաւատակիցն իւր։ Եւ ապա յանձնեաց զինքն վանորէիցն աղօթել վասն նորա. և ինքն երթեալ ՚ի Գաւառ առ աստեղնահատ ուխտն Սարգիսն՝ զոր օրհնեաց երանելին և ուխտը վարդապետին Մեսրոպայ. և արարեալ անդ ուխտ և մնացեալ՝ ամբողջ նշանին, և ապա առեալ զեկեղեցին գնաց առ Հայրապետ Դաւթ։

Իսկ յայնժամ եսես Հայրապետ Դաւթ զՍադունն և զհրամանն և զերկայն հասանել նորա. յայժ ուրախացաւ. և հրամայեաց ինն օր երկու բաւքայլին կալ ՚ի մխսաքին. և ամենայն օր ետ ուտաղացույք աշխար մի և ուրիկ մի գինի։ Եւ յորժամ վճարեցաւ ինն օրն այն, ապա հրամայեաց ժողովել ամենայն զխասուորացն տաւղի Դաւթի. և կոչեալ զերկու բաւքայն, հրամայեաց բռնել զմիմեանս. և յայնժամ ըմբռնեցին զմիմեանս, էր առաւօտն երեք ժամ. և յերեք ժամէ առաւօտն մինչեւ ցվեց ժամն զմիմեանս կալին ուռեալ երկուսն և ոչ կարէին միմեանց յաղթել։ Եւ ապա Սադունն զօրացեալ անուանեալն Աստուծոյ յանձնապարծանկի ուժգին բախմամբ զգեանեաց զգաւաքայ Մանկու Դաւթին տաւղի հարաւ Դաւթին. և մեծացաւ Սադունն տաւղի Դաւթին. և նման նմա ոչ գտաւ յամենայն եր-

կէր հարկեօք և մեծութեամբ և ուժով 'ի ժամանակս Տաճարին, և հրամայեաց Հուլաւու Ղանն զերէլ խաւլախ, և թողուլ նմայ մինչեւ 'ի յիւն գունահն :

ԳԼՈՒԽ ԺԳ.

Պատերազմունք Հուլաւու Ղանին 'ի վերայ Հալպայ, Դամասկոսի եւ Երուսաղեմի, եւ մահ նորա :

Եւ զկնի այսորիկ հրամայեաց Ղանն զօրացըն ժողովել 'ի սահմէն երկուքին. և եդ նոցա գլխաւոր զՔիթ Բուղայն, և յուղարկեաց զնոսա 'ի վերայ Հալպայ և Դմշկայ. և ընդ երթալն առին զՀալպ և յանխնայ կոտորեցին և գերեցին և լցան բազում գանձիւք. և ինքն Հուլաւու Ղանն կայր գնացեալ զկնի հեծելին. և յորժամ գիտացին Դամասկացիքն, թէ առին զՀալպ, ապա ինքեանք իւրեանց կամաւոր տուեն զքաղաքն և զբանալի քաղաքին 'ի ձեռս Հուլաւու Ղանին :

Իսկ Երուսաղէմ քաղաքն և սուրբ գերեզմանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ կայր 'ի ձեռըս Տաճկացն 'ի Սալահատին Սուլտանէն 'ի վեր : Զայս լուեալ Հուլաւու Ղանին գնաց 'ի վերայ Երուսաղէմ քաղաքին և էառ զնա. և ինքն մտաւ 'ի սուրբ Յարութիւնն, և երկիր եպագ սրբոյ Գերեզմանին. և թողեալ զզօրքն 'ի տեղն, և ինքն դարձաւ խաղաղութեամբ յաշխարհն արեւելից :

Իսկ Քիթ Բուղայն որ էր գլխաւոր զօրացն Տաթարին՝ հպարտացեալ անցաւ քան զԵրուսաղէմ՝ 'ի վայր տասն աւուր Ճանապարհ : Իսկ . . . անիրաւ Մորցին գիտացեալ զանպատրաստ կենալ զօրացն Տաթարին, ապա զօրաժողով լեալ անթիւ բազմութեամբ եկն 'ի վերայ Տաթարին, և զբազումս կոտորեաց 'ի նոցանէ, և զբազումս փախստական արար, և զբազումս կերբեաց. և դարձեալ էառ զԵրուսաղէմ ըղՀալէբ և զԴըմըշկ. և այս եղեւ օգնութեամբ փռանգ հեծելոյն. զի դեռ չէին ելեր ընդ Տաթարին, և այս այսպէս գործեցաւ :

Իսկ ընդ աւուրս ընդ այսոսիկ երեւեցաւ աստղ մի վարսաւոր, և ծագեաց նա յառաջ ընդ առաւօտն յաւուր շաբաթու 'ի տօնի Տապանակին. և օր ըստ օրէ աճէր վարս և շառաւեղ աստղին. զի 'յառաջագոյն ընդ առաւօտն ծագեաց, և ապա փոքր փոքր յամելով անկաւ 'ի Ճաշու ժամն, և անդ ծագէր. և այսպէս զօրն յեռ ձգելով հասաւ յերեկոյն, և 'ի մետասան ժամու աւուրն ծագէր. և շառաւեղք վարսին հասանէր յարևելից մինչև 'ի մէջ երկրին. և այնչափ շատացաւ շառաւեղք վարսին, մինչ զի յայժ ահագին երեւէր ամենայն աշխարհիս. վասն զի ոչ էին տեսեալ այսպիսի զարմանալի նշան 'ի վերայ երկրի. և այսպէս յաւելլով 'ի շառաւեղսն լոյսն և ընդարձակ եկաց մինչ 'ի մուտս Ձմերան ամսոյն. և ապա որպէս աճեացն նոյնպէս սակաւ սակաւ պակասէր օր ըստ օրէ, մինչև ամենեւին հատաւ շառաւեղք վարսին և այլ ոչ երեւիւր :

Իսկ Հուլիանոս Դանն յորժամ ետես, իմացաւ առ ժամայն, թէ վասն իմ ծագեաց աստղս այն. և անկեալ 'ի վերայ երեսաց իւրոց երկիր եպագ Աստուծոյ. վասն զի յոյժ վախեցաւ յորժամ' ետես պատկառիլ աստղին շառաւեղքն. և ամենայն երկիր իմացաւ զայս, որ որչափ Հուլիանոս Դանին ձին գնաց և երկիր կալաւ, այնչափ երկայնացաւ շառաւեղք աստղին։ Եւ ապա պանկառեաց. զի տարի մի այլ ապրեցաւ Հուլիանոս Դանն, և ապա պակասեաց յաշխարհէս. Թողեալ յետ իւր երեսուն որդի։ Դրամեալ և 'ի նոյն ամին յորում մեռաւ Հուլիանոս Դանն, մեռաւ և քարի կին նորա Տաւփրոսիթուհին, և յոյժ արտմութիւն եղև ամենայն քրիստոնէից մնաց նոցա։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Մահ կոստանդնի իշխանի Հօր Թագաւորին Հայոց Հեթմոյ։ Յաջորդէ ցՀուջաւունն Աբազան որդի նորա՝ Մլեհանի Տ. կոստանդին կաթուղիկոսն Հայոց։ Յարձակումն փոխադրական Սուլտանին Եգիպտոսի 'ի վերայ Հեթմոյ. գերութիւն Լեւոնի արքայորդւոյն Հայոց, ցաւ եւ հեծութիւն Հեթմոյ ընդ կորուստ որդւոցն։

Յաւուրս յայսոսիկ փոխեցաւ մահուամբ 'ի Քրիստոս Թագաւորահայրն Հայոց պայրոն կոստանդեայն ալեւորեալ և լի աւուրբք. և եթող աւագ մեծ բարեպաշտ Թագաւորին Հեթմոյ և այլ եւս որդւոցն և աշխարհին Հայոց. վա-

որն զի պարոն Կոստանդին էր պատճառ շինու-թեան աշխարհիս Հայոց. և հաստատութեան Թագաւորութեան որդւոյ իւրոյ Հեթմոյ. վասն որոյ կանգնեաց քրիստոնէական Թագաւորն Հե-թում, և մեծաւ պատուով Թաղեաց զՊարոն հայրն իւր. որոյ Քրիստոս Աստուած փառա-ւորեսցէ զհոգի նորա, և որոց իշխանացն մա-նակից արասցէ յիւր արքայութեանն.

Իսկ զկնի Հուլաւուն մահուանն յետ ամի միոյ արտաքին մեծ խռովութեան, և եդին զԱբա-ղանն Ղան, զաւագ որդի Հուլաւունին. և էր Աբաղանն բարի անձամբ և գեղեցիկ հաս-կաւ 'ի մէջ երեսուն եղբարց իւրոց. և յաւու-րս ղանութեան նորա էր առատութիւն ամե-նայն իրաց ընդ ամենայն երկիր.

Իսկ ընդ աւուրս ընդ այսոսիկ փոխեցաւ 'ի Քրիստոս սուրբ և անբիծ հայրապետն Հայոց տէր Կոստանդին բարի անուամբ և կատարեալ ծերութեամբ. որոյ աղօթիւք նորա առցէ Քր-իստոս խաղաղութիւն երկրպագուաց անուան իւրոյ. Եւ զբարեբեր հոգի նորա և զսիրող ուղ-ղափառութեան հաւատոյ. և ամենայն կարգաց եկեղեցւոյ իւր սրբոց Հայրապետացն մասնա-կից արասցէ. լսելով զձայնն որ ասէ. «բարի ծա-ռայ և հաւատարիմ, եկ մուտ յուրախութիւն տեառն քո 'ի կենացն յաւիտենից»:

Իսկ բան իմաստնոյն սուտ կատարեցաւ, որ ասէ. «'ի պակասել բարեացն և բարերարացն, առաւելուն ուխք չարութեանն»: Որպէս և առ մեզ կատարեցաւ. Զի անօրէն և կատա-

որ Սուլտանն Մուրատ եկն բազում զօրօք 'ի Դիմբչիս, և անտի յուղարկեալ զեսպանս առ Թագաւորն Հայոց վասն սիրելութի ինչ, զի խնդրէր 'ի Թագաւորէն, և Թագաւորն Հայոց ոչ տայր. այլ պատուիրէր բանս Նախատանաց... ծառայ անուանել Նմա, այսպիսի պատասխանաւ:

Ցորժամ Տաթարն զՊաղտատ էառ, յայնժամըն էին երկու ծառայք Սուլտանին Մուրատ 'ի Պաղտատ. անուն միոյն Փնտուխտար, և միոյն Աղուր. իսկ յորժամ իմացան թէ էառ Տաթարըն զՊաղտատ, առեալ երկու ձի փախեան գէմ եղեալ գնալ 'ի Մսր: իսկ Տաթարն առեալ զփախուստն Նոցա, գնացին 'ի վերայ Նոցա ձիաթողք. իսկ Փնտուխտարն էր մօրուօք և ունէր մեչքամ ձի. և Աղուրն էր աղայ, և ձին աղէկ. երբ իմացան թէ հասանել կամի Տաթարըն և զերկուսն ըմբռնել, Աղուրն իջեալ 'ի տաձիկ ձիոյն, եառ 'ի Փնտուխտարն. և ինքն ելաւ 'ի վերայ ձին. և առաց Փնտուխտարին թէ դու ել 'ի յաղէկ ձիդ և փախիր. ես աղայ եմ թէ զիս բռնեն, սպանեն ոչ, այլ տանին ծառայ. յայն ժամ զինչ 'ի քեզ ճար լինի զիս գնեա. և առ ժամայն հասան Տաթարքն և ըմբռնեցին զԱղուրն. և տարան ծառայ. և ըզՓնտուխտարն ոչ կարացին ըմբռնել, զի ձին աղնիւ էր, փախեաւ և գնաց 'ի Մսր. և 'ի գնալն Նորա 'ի Մսր մեռաւ Սուլտանն Մուրատ. և եդին զՓնտուխտարն Սուլտան Մսրայ: Զայս լուեալ Հայոց Թագաւորին... ծառայ անէր Նմա. և ոչ առնէր սէր. այլ կայր ընդդէմ Նմա ան-

սեր և անհնազանդ, զխաւերով զաղաքան հայրենի իւր կենդանի, և կամ զէր իշխանանն միամիտ ։

Եւ զխաղացեալ Տուղամանիին զմիտս Թագաւորին Հայոց, յուղարկեաց բազում հեծեալս ՚ի վերայ աշխարհիս Հայոց ընդ ճանապարհն Մառաղ. և ինքն գնաց նստաւ ՚ի Խարբերդ. և պատուիրեաց զօրացն թէ կարեն ձմեռանել. յեր-կիրն անխնայ կոտորել զքրիստոնեայսն և քա-կէլ զեկեղեցիսն և այրել զշինութիւնս քաղա-քաց և գեղից. և կալ յերկիրս զաւուրս հնգե-տասան. և գերել զկանայս և զաղջկունս քրիստո-նէից, զոր և արարին իսկ ։

Իսկ Թագաւորն Հայոց իբրեւ գիտաց ըզ-գալ Թուրքին ՚ի վերայ երկրի իւրոյ. յայնժամ ժողովեաց զզօրս իւր. և ետ ՚ի ձեռս Թագա-ւորազն որդւոյ իւրոյ Պարոն Լեւոնի և Թո-րոսին. և ինքն գնաց սակաւ մի զօրօք առ. Տա-թարն որ կայր իշխեալ ՚ի մէջ Եփրատին և Կոկը-սոնոյ. և անդ յամեալ աւուրս ինչ ոչ գիտելով զերադաւանութիւն զօրաց իւրոց. և մինչ հոգաց առ զխաւորս Տաթարին գալ և օգնել զօրաց նորայ. և ինքն երէկ երկու աւուրբ յառաջ, ա-յսպէս լսեաց զգալն Թուրքին և զբեկումն զօրացն երկմտոց. որ ետուն զԹագաւորազն որդին իւր ՚ի ձեռս անօրէն զայլոցն. և ինքեանք փա-խեան յամրոցս իւրեանց. զի զգեղեցիկ որդի Թագաւորին զՊարոն Թորոս ՚ի պատերազմին սրախողխող արարին յիւրում երիտասարդին. զՊա-րոն Լեւոն ըմբռնեալ բազում զօրք Թուրքացն և տարան ծառայ ՚ի Մսր ։

Եւ զայս լուեալ մեծամեծքն թագաւորին Հեթմոյ՝ ընկալաւ սիրով ՚ի կարծ. և յանցաւորքն ապստամբութենէն որ յանկարծահաս դիպեցան. և ոչ կարէր կանգնել ՚ի սիրտ իւր. մինչ եկն ՚ի սուրբ և ՚ի գերահռչակ ուխտն միանձանց ՚ի Ակներ՝ց անապատս. և անդ մխիթարեալ ոսկան մի ՚ի միւսքէն եղբարց սուրբ Ուխտի կեցեալ աւուրս ինչ, մինչ եկաւ Թուրքն յերկիրս. զի անօրէն զօրք Թուրքին զամեն պատուիրեալն ՚ի Սուլտանէն արարին. զԱխօ քաղաքն այրեցին որ է նստոց Թագաւորին Հայոց. և ըղ-գովելի մեծ եկեղեցին որ ՚ի մէջ Սսոյ նիստա ձգեալ այրեցին, և շքեղեմ թագաւորացն քանդեցին. և զբազումս կոտորեցին ՚ի քրիստոնէից և զբազումս գերեցին ՚ի յերկիրն և ՚ի գեղօրէիցն։

Եւ ապա յետ աւուրց ինչ գնաց զօրք Թուրքին բազում զանձիւք և աւարաւ յաշխարհէն իւրեանց, թողեալ զաշխարհս Հայոց կիսաւեր․ իսկ որք առ ինն զպարոն Լևոն և գիտացին թէ ոմոյք որդին է Թագաւորին, տարան ուրախութեամբ առ Սուլտանն. և տեսեալ Սուլտանն ուրախացաւ. բայց ընդ պարոն Թորոսի սպանումն յոյժ տրտմեցաւ, և յոյժ բարկացաւ սպանողացըն. և սպանողքն ասացին թէ մեք ոչ գիտացաք թէ որդի Թագաւորին է. զի զբազումս եսպան ՚ի մեզանէ, և զբազումս խոցեաց, ապա յետոյ մեք ջան ՚ի վերայ եդեալ սպանաք զնա։

Յետ այսորիկ խօսեցաւ Սուլտանն ընդ Լեւոնի և ասէ. քո հայրն ինձ ծառայ ասէր, և ոչ տանէր սէր. ծառայ այժմ ես եմ թէ դու.

զայս և այլ բազում բանս խորհրդականօք խօսէր ընդ Թագաւորի որդւոյն. և ապա յետոյ յորժ մեծարանօք պատուեալ և օրհնեալ և առաքեալ բանս մխիթարականս չվախել ոչ ինչ, այլ կալ ուրախութեամբ առ ուրս ինչ. և ապա դարձուցանել զնա առ հայրն իւր Թագաւորն Հայոց. և զայս առաքեալ փնտուխտար Սուլտանին առաքեաց զպարգևն Լևոնի 'ի Սոր.

Իսկ բարեպաշտ Թագաւորն Հեթում առ ոչինչ համարեալ զայս ամենայն ինչ աղետից առ ժամանակ մի վասն նենգաւորու և երկմիտ իշխանացն, շահելով զբարս նոցա ուրախութեամբ սրտի, առ իւր ունելով զայլ մանր ուսանեան և զգուշեան մխիթարէր 'ի նոցանէ սուտ մխիթարութեամբ. վասն շահելոյ զբարս իշխանացն և գիտէնալոյ զխորամանկ միտսն նոցա սիրով. զի որ գրէր գիր յիշխանացն վասն պակասութեան որդւոյն. և. սեւօք կապէր և առ Թագաւորն առաքէր. Թագաւորն գրէր պատասխանի և կարմիր կապեալ 'ի Թուղթն, այնպէս առաքէր. և զայս լսելով և ձեռքն միայն գործէին և շարժէին, բայց զմիրտն ինքն և Աստուած միայն գիտէին, թէ որպիսի կրակով լըցեալ էր. զի ոչ տեսանէր զայնպիսի գեղեցկապատկեր և զծաղկայից որդին իւր, առ այլ իւր ոչ երբեկոյ և ոչ 'ի վաղիւն և ոչ 'ի ժամ ճաշուն յուտել և յըմպել. և ընդ միտ ածեալ զանմխիթար աղէտս գեղեցիկ որդւոյն, զԹորոսի գեղեցիկ պատկերն և զվայելուչ հասակն, որ 'ի որոյ բաժանեցաւ յանդորրմ Ա. յարիւնայքն

անօրինացն, նմանապէս և զԼեւոնի աչիւ և ան-
դոհիւ լինել 'ի մէջ այլազգեացն 'ի ծառայու-
թիւն. զայս ամենայն զմտաւ ածեալ բարեպաշտ
Թագաւորն Հայոց՝ այրէր անհնարին կրակով և
գալարէր աղէքն յաղագս սիրոյ որդւոյն որ ոչ
տեսանէր. և թաւալէր ընդ երկիր անմխիթար
ողբով. բայց գաղտ և 'ի ծածուկ. զի մի գիտա-
ցեն նախարարքն և տիրապատան իշխանքն և տա-
րախտացին ընդ տրտմութիւն Թագաւորին։ Եւ
այս գործ գործեցաւ յաւուրս յամառնային յե-
ղանակին յետին ամսեանն, 'ի տօնի սրբոյ Աս-
տուածածնին.

Եւ Թագաւորն Հեթում հանէր տուեալ
կրակով լեալ սրտին և եկաց մինչեւ 'ի տօն սրբ
Առաքելոցն ծածկելով զտրտմութիւն իւր յանէր-
կեղ իշխանացն. և ապա հրամայեաց կոչել զամե-
նայն իշխանսն զոր 'ի հեռի է և զոր 'ի մօտ. վասն
պատճառի ջուր օրհնելոյ 'ի քաղաքն Մսիսուէ ժո-
ղովեցան ամենայն իշխանքն որք կային ընդ Թա-
գաւորութեամբ նորա 'ի քաղաքն Մսիս։ Եւ
յորժամ գիտաց Թագաւորն զգալուստ ամե-
նայն իշխանացն, ապա հրամայեաց գալ առաջի
իւր և նստել. և յորժամ ամենեն եկին և նստան,
հրամայեաց սպասաւորացն Թագաւորն թէ այլ
են պակաս՝ կոչեցէք. և նոքա ասացին. սուրբ
Թագաւոր, ամենեն այս են, որ քեզ առաջի կան.
և Թագաւորն ստիպէր կոչել զպակաս իշխանսն,
և զպարոնայսն. իսկ սպասաւորք Թագաւորին
ոչ կարէին իմանալ զմիտս Թագաւորին. ապա
իշխանքն ասացին ցԹագաւորն. թէ զոր դուք

հրամայեալ էք և կոչեալ, ամենեն առա է և չէ ոք պակաս ։

Իսկ թագաւորն զայրագին սրտիւ հայեցեալ յարտաքոյս և յայնկոյս. և ապա հրամայեաց կի-տաձայն և սրտառուչալից աչօք. թէ երբ ամենըն առա էն, ապա ո՞ւր են Լեւոն և Թորոսն. յայնժամն ակռան իշխանքն անմխիթար և ծանըր ոգով ծեծել զկուրծանց գլուխս և վայ և եղուկ ասել. յիշելով զգեղեցիկ որդիս թագաւորին իւրեանց զմիւսն ’ի ծառայութիւն ’ի մէջ այլազգեաց. և զմիւսն սրախողխող եղեալ ’ի ձեռաց անօրինաց. և այնպիսի աղի և ողորմ արտասուօք լային ոչ միայն իշխանքն այլ և քահանայք և վարդապետք եկեղեցւոյ յերգ արկեալ զողբս Երեմիայ մարգարէին որ ասէ. ո՞ տայր զգլուխս իմ շտեմարանս ջուրց, և զաչս իմ աղբիւրս արտասուաց. զի նստեալ լայի զբեկումն ժողովրդեան իմոյ։ Նոյնպէս վարդապետքն և քահանայք և իշխանքն լային. և ոչ ոք կայր ’ի մէջ նոցա որ մխիթարէր զնոսա. այլ կային տարակուսեալ ’ի ծանր սուգն բեկեալ սրտիւք ։

Իսկ մեծամեծք և մեծահոգի թագաւորն Հեթում, ինքն. յինքեան կանգնեաց զբեկեալ զտրտմեալ սիրտն իւր, և ապա խօսեցաւ բանըս մխիթարականս ’ի սիրտս իշխանացն և քահանայիցն և վարդապետացն, այսպէս ասելով. գիտէք ամենն իշխանքդ և վարդապետքդ և քահանայքդ. որ Վարդանանցն պատերազմն վասն քրիստոնէից եղեւ. և այսչափ բազմութիւն հեծելոցն վասն քրիստոնէից նահատակեցան և եր-

կեանս որ պատուհասն արժանի եղեն. Նոյնպէս և որդւոյն իմ Թովմայ վասն քրիստոնէից պատերազմեցաւ և վասն քրիստոնէից նահատակեցաւ. և խառնեցաւ 'ի գունդս որբոց Վարդանանցն. և նոցին պսակացն արժանի եղեւ: Զնա այլ մի լայք. այլ երանեցէք զնա, զի սիրեաց զնա Քրիստոս, և իւր սրբոցն պսակացն արժանի արար. եւ զարիւն նորա ընդ արեան Մարտիրոսացն խառնեաց ժառանգելով ընդ նոսա զերկինից արքայութիւնն որ 'ի Քրիստոս Յիսուս:

Իսկ Ղեւոն երէց որդին իմ որ է 'ի ծառայութիւն 'ի մէջ պալատացն. (ինձ լաւ է Ղեւոն 'ի ծառայութիւն, և Թովմա իւր արեամբն 'ի քրիստոնէից պաշտեալ.) քան ես այս ամեն երկիւղս և ձեր արեանց, և խղճիւ տխրացեալ. վասն զի դուք ոչ գիտէիք Թէ այս ցեղ չէր հանդիպելը. ի՞նչ կայր Հայոց երկրիս առաջի: Զայս և այլ բազում բանս մխիթարական խօսեցաւ Թագաւորն և դադարեցոյց զիշխանսն 'ի լալոյ և 'ի սգոյ: Իսկ բարեմիտ և բարեկամ իշխանք Թագաւորին նա և քահանայք և վարդապետք և եպիսկոպոսք որ էին ժողովեալք առ Թագաւորն վասն տօնի սրբոյ Յայտնութեան, և մխիթարեցան 'ի Թագաւորէն վասն որդւոյ Թագաւորազնացն. Նոյն և նորա խօսեցան մխիթարական բանս բազումս և կանգնեցին զդսերս Թագաւորին. և արարին զտօն սրբոյ Յայտնութեան 'ի միասին ուրախութեամբ մխիթարելով զԹագաւորն: Իսկ Թագաւորն ոչ կարէր դադարեցուցանել զլալսն 'ի Թառանչելոյ և

յորդւոց Հանանեայ վասն Լևոնի որդւոյ իւրոյ որ էր 'ի Միսր ծառայ. և ոչ գտանէր հնարս. թէ որպիսի հնարիւք կարէ զերծուցանել զնա։ Եւ ապա դարձեալ կոչեաց զիշխանսն առաջի իւր թագաւորն. և եհարց զնոսա. թէ որով հնարիւք կարէ հոգալ վասն ազատելոյ Լևոնի որդւոյ իւրոյ։

Իսկ իշխանքն յանդգնոս եղեալ մեղադրեցին թագաւորին և ասացին, թէ Ըինհն ինչ գտանէ մեզ. որ դու վասն Ըինայ զքո որդին կորուսեր. և զմեզ նոցա խողխողին տկարացուցեր. այն լաւ չէ՞ր թէ այն մին զեօղն մեր չէր լեալ. քան մեք ամէն աշխարհի զլոյց և ծառք եղաք. Իսկ թագաւորն հրամայեաց իշխանացն լռել յանդգնուտ խօսիցն. և լալ 'ի նմանէ զոր ինչ պատուիրեալ էին նմա 'ի ծածու. կ հայոց իշխանքըն որ կային 'ի դրան Սպաղայ Ղանին. զի ընդ առաւրան ընդ ամենայն էին ամձիկ ամիրայք հողայոցք և թզեաշխք (1) Ղանին. բարեկամ Մոզղուլին 'ի ծածուկ. և չարակամ թագաւորին Հայոց. և ամենայն քրիստոնէից. և Տածիկ ամիրայքն և հոգեզգաւնին գրեալ էին առ Սուլտանն Միսրայ 'ի ծածուկ. թէ ջանացիր որ սիրով մէկ զիւղ թափես 'ի Հայոց թագաւորէն. և այն նախ կորստեան և իւր երկրին հերիք է. և բաւական. մեք ասեմք և հոգամք առ Ղանըն որ զՀայոց թագաւորդ իւր ամէն երկրովըն ազէ բանէ և հեծեալ յղարկէ և կոտորէ զամէնն։

(1) Ցօրինակն Բիթիքչիք.

Իսկ բարեպաշտ Թագաւորն Հայոց զայս ամենն գիտացեալ էր յառաջագոյն և լուեալ 'ի ձեռն ծածուկ գրոց Հայոց իշխանացն որ կան յԱրեւելքն, և են բարեկամք և յոյժ սիրողք այս Թագաւորութեանս . զի գրեալ էին Հայոց իշխանքն առ բարեպաշտ Թագաւորն Հեթում, բանս մխիթարականս վասն որդւոցն և վասն երկրիս . և 'ի վերջն զայս , թէ ով սուրբ Թագաւոր, բան ոչ մեք եմք լսել . լուր է քեզ նոյն որ քո մին որդին վասն քրիստոնէից մեռաւ և, մինն ծառայ գնաց . և այս Տաճիկքս . . . յանօթ եղան . որ 'ի յայս գաւառս կան , քան զքո Թագաւորութիւնդ ամենն անցած և երկիրդ ընդ մին աւերած և քրիստոնէայքդ կոտորած . վասն զի այս Տաճիկ . . . յամենայն ժամ ասեն ընդ Ղանս թէ Հայոց Թագաւորն և Մորայ Սուլտանն մի են և մին խօսօք , և մեք Հայոց իշխանքս երդուեալ եմք Ղանին առաջի , թէ Տաճկանիդ ասեն են, մի՛ հաւատար դոցա . և այժմ զայդ լսեցին և յանօթ եղեն Տաճկանիս, ու Ղանին սիրտն լուացաւ 'ի հետ քեզ միահետ. այդ թէ լսեալ էր որ խաբեալ էիր և լուր մին դատարկ տուն էր առեալ . թող թէ Հէն գեւղ որպէս նա ուզէր յայն ժամն քո Թագաւորութիւնդ ամեն անցեալ էր . և մեք յանօթ եղեալ: Իսկ յորժամ զայս ամենայն լսեցին իշխանքն 'ի Թագաւորէն հիացան ամենն. և մեղայ առացին Թագաւորին վասն ոչ գիտելոյ զայս ամենայն պատճառս բանից ։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Թանարգնացութիւն Հեթմոյ ընդ փնտաւխասպ։ Տ. Յակոբ կաթուղիկոս Հայոց։ Դարձ Լեւոնի 'ի գերութենէն, ուրախութիւն Հեթմոյ, հրաժարումն 'ի թագաւորելոյ, մենակեցութիւն եւ մահ ։ Մեռանի եւ Դաւիթ արքայ Վրաց։

Եւ ապա յետ այսորիկ հարցեալ խրատ զիշխանն Թագաւորն Հայոց առաքեաց դեսպանս առ Սուլտանն Մսրայ. խնդրել վասն որդւոյն իւրոյ Լեւոնի. Թէ ինչ է կամքն Սուլտանին. ինչ տայ եւ գնէ զորդին. իսկ Սուլտանն Մսրայ Փնդ՛ուխտարին Թէկղէսո էր Տաճիկ, այլ յոյժ ազեկաւոր էր եւ խոնարհամիտ. զԹագաւորորդին Լեւոն խիստ աղէկ էր տուեալ պահեալ կենօք եւ ամենայն իրօք. եւ յորժամ լուաւ զգեսպանացն զնիւթն ուրախացաւ եւ ասաց. Թէ զիտի որ զԼեւոնս տանիք յիւր հայրն եւ յիւր Թագաւորութիւնն. իմ սիրելի ընկեր կայ առ Տաթարին ծառայ. որ ձեր ձեռօք 'ի վէր էր գալ. եթէ զնա ուղէք 'ի Տաթարէն. ձեզ չխնայեն, զնա բերէք Սղուր է անունն. եւ զԼեւոն տարէք. զայս լուեալ Թագաւորն Հայոց 'ի գեսպանացն, իսկոյն զուգեաց բազում գանձս եւ զպատուական ինչս. եւ գնաց յարեւելք առ Աբաղայ Ղանն. եւ ասաց զամենայն զանգատ զոր արար Մսրցին ընդ նա եւ ընդ երկիրն իւր. ասաց եւ զխնդիրքն Սուլտանին վասն Սղուր ծառային, եւ ոչ կարաց Թափել առ ժամն՝ բայց եկն

և առաքեաց զեղբօր որդին իւր և ընդ յաջորդե- լոյն Աստուածոյ գնաց և երկիր զՍողուր ծառայն յերկիրս :

Իսկ ընդ աւուրս ընդ այսոսիկ եկն Սուլ- տանն Մորայ 'ի վերայ Անտաք քաղաքին. և ե- առ զԱնտաք և քակեաց զնա 'ի հիմանց. և յան- խնայ կոտորեաց, որ ոչ պատմի զինչ տարաբե- այլազգիքն ընդ հաւատացեալս Քրիստոսի : Եւ յորժամ՝ առաքեաց Թագաւորն առ Սուլտանն թէ ընդէ. զՍողուրն, յոյժ ուրախացեալ և բա- զում ընծայիւք առ ժամայն առաքեաց. զԼե- ւոն. և տեսա զՍողուրն յուղարկեցին բազում՝ ընծայիւք : Իսկ 'ի գալն պարոն Լեւոնի յոյժ ուրախութիւն եղեւ Թագաւորին և իշխանաց աշխարհիս, նոյն և վանորէից և ամենայն քրիս- տոնէից որ ընդ ամենայն երկիր :

Իսկ 'ի պատճառն մահուանն մեծ հայրապե- տին Հայոց զմի ամ առանց հայրապետի եկաց աշխարհս Հայոց. զի Թագաւորն կայր 'ի տրտմու- թեան վասն որդւոյն, և այլ ոք ոչ կարէր հոգալ առանց Թագաւորին. և ապա հարկեալ Թագա- ւորն յիշխանացն և 'ի վարդապետացն և յեպիս- կոպոսացն, որ տայցեն անդադար զեկեղեցիս Հայոց առանց հայրապետի և կաթուղիկոսի. Եւ Թագաւորն հարկեալ արար ժողով մեծ եպիս- կոպոսաց, քահանայից և վարդապետաց, և ա- րար ընտրութիւն 'ի մէջ նոցա. և եգիտ այր ըստ սրտի իւրոյ, յոյժ իմաստուն և առաքինի, հեզ և խոնարհ սրտիւ. և կատարեալ վարդապետ Յակոբ անուն : Եւ ապա մեծաւ հանդիսիւ օրհ-

Նել երկոտ կաթուղիկոս. և Նաւոցս յԱթոռ Սուր-բոյն Գրիգորի լուսաւորչին. որոյ պահեսցէ ըզ-նա Քրիստոս Աստուած ամուր և անսասան անքիծ և ուղիղ հաւատով և ուղղափառ խոս-տովանութեամբ մինչև 'ի խորին ծերութիւնն հովուել զնոր ժողովուրդքս զհաւատացեալքս Սրբոյ Երրորդութեանն:

Իսկ յայժամ եկն սպարապետ Լևոն ազատեալ 'ի ծառայութենէ առ ժամայն ընդդէմ զնոցա բարբարոսացն և օրհնեալ թագաւորն Հեթում. և զամենայն թագաւորութեան իւրոյ պայազատու-թիւն եւս 'ի ձեռս որդւոյն սպարապետ Լևոնի. և ինքն միայնաւորեալ սկսէր զվանս և զանապատս. և յետ աւուրց ինչ յանկարծակի գիւղեցաւ վէրք ինչ 'ի մարմին նորա, և յայժ նեղէր զնա. և էր նա 'ի ապաս և յաղօթս հանապազ. մինչ զի առնել երկոտ զինքն կրօնաւոր և Մակար ա-նուանեցաւ. և յետ սակաւ աւուրց փոխեցաւ 'ի Քրիստոս սուրբ և քրիստոսասէր բարե-պաշտ թագաւորն Հեթում. և թաղեցաւ մեծ պատուով 'ի սուրբ և 'ի հաշակաւոր մենաս-տանին որ կոչի Դրազարկ. որոյ Տէր Աստուած փառաւորեսցէ զհոգի նորա ընդ սուրբ թագա-ւորացն և նոցին պսակացն որք արժանի եղեն, ընդ նոսին փառօք փառաւորեսցէ, և երկնա-յին օթևանացն ուր սրբոց կայանք են արժա-նացուսցէ:

Իսկ զկնի մահուան բարեպաշտ թագաւորին Հայոց. մեռաւ և Վրաց թագաւորն Դաւիթ. որ և կարծեմ թէ 'ի միում ամսեան գիւղեցաւ

մահ նոցա. զի եկին 'ի կենդանութեան խաբէանց յայտ առնելովք և գովելովք 'ի սուտ և 'ի գեղեցկութիւն մարմնոյ. նոյն և սուսերի երկնաւոր թագաւորին Քրիստոսի Աստուծոյ մերոյ լինիցին:

ԳԼՈՒԽ ԺԶ.

Ամբաստանութիւն ցԹագաւորայ եւ ուխերանց, կաչառութիւնք հրամանաւ Արքայից Դանին:

Յետ այսորիկ յետ Թն Դանիէլ որդեւացն' որ յաստուածայոյն գրեցաք զի զերեքն սատանին և երկուան հնազանդեցան, զմեկն յաղթ ծնեալ 'ի բանդի դրին. խոկ մեկն 'ի հնազանդեցոյն Թագաւորար անուանն' յայտ շառաւեղա հետեւեալ և գանձով ասկով եւ ամենայն ընչիւք. զի երեք հարիւր ուղտ եւ հարիւր ջորւոյն սայլ ընդգանձն և զմայլն տանէին Թող զշուկս ձիոցն և զհօտիցն որոց Թիւ ոչ գոյր. և էր Թիւ հեծելոցն քառասուն հազար, անուանիք և յայտ պատերազմողք և անուանեալք յամենայն ասպարէզս. զի զկարեւան երկիրն կոտորէին ասպատակութեամբ պահելով 'ի գիշերի զձանապարհս. և զամենայն խնչան ատանուքին զկարեւանին որ զընային 'ի քաղաքէ 'ի քաղաք. նոյնպէս և զփողը գեղօրէս 'ի գիշերի ծեծէին և զամենայն խնչաազն և զշարքաստանիդ տանէին և զմարդիկն նետով սպանանէին խոցէին. նոյնպէս և երթային 'ի վաճառս և զմանաւանդ երէցներն զլխիխլոյր կտրէին. և աղ և ունէլ խառնելով ածէին ընդ' քիթ-

որին ժամանակագրացն , ասելով . թէ ընդ գինի ծովին չափս և միս ասրին չափ ։ Այլ և արարին 'ի բազում անգամ . զի պշանն ազին բանել տոյին առեղայցն բերանով 'ի վանքին' վասն գինի չունելոյ ողորմելեացն . զի այս էր երդումն նոցա , կամ առաւ գինի ըմպելոյ և ուտելոյ որչափ ուզէին , և կամ այսպէս ըմբռնել պշանն ազին որպէս գրեցաք ։

Եւ այսպէս կայրին յաղեկածանք վանքերն արեւելից յանապատի գլխաւորքն . և դոյս գիտացեալ իշխանացն Հայոց և Վրաց ։ գնացին միարան առ Արսաղա Ղևոնդ , և ընկեցին զաւառերըս թագերանց առաջի Ղևոնդի և ասացին . կամ զթագաւորացն առաք 'ի ձեռս նոցա իւր հեծելովն , կամ զիւրեանցն կտորել առաջի իւր , և ոչ տեսանել զայնպիսի նախատինս , որ առնէին առ եկեղեցիսն իւրեանց և առ եկեղեցականսն ։ Նոյնպէս և այլ Տանուտեր զօրքն զանգատեցան առել թէ 'ի զուր զմեզ այլ կոտ ծեծեն զօրք Թագաւորին , և զմեր ձիանն առնուն ։ Նոյնպէս և Ղևոնդ գանգատեցաւ առաջի Հայոց և Վրաց զօրացն , այլ և իւր Տանուտր գլխաւորացն և ասէ . Թագաւորն մեծացաւ և հպարտացաւ , և զմեզ չէ 'ի մտել . և զմեր աւախին չէ 'ի յառնել . և կամի աւրել զերկիրս իւր , անասուն կալուածս և իւր հեծելոյն ։

Այսպէս հրամայեաց Արսաղա Ղևոնդ Աբրահամանին , որ յառաջին գրեցաք այն որ ոսկի օխն անուանեցաւ , առնուլ հարիւր հազար հեծելոց Տանուտր . և եա պնշանն իւր Ղևոնդ 'ի ձեռն Աբ-

բամունեին. Նոյնպէս հրամայեաց Հայոց և Վրաց զօրացն գնալ խուժանաց ամենայն ուժով 'ի վերայ Թագաւորին և անխնայ կոտորել զնա, և առնուլ զամենայն ինչս նորա, և զինքն զԹագաւորն կենդանի տանել առ ինքն. և զայս լուեալ Հայոց և Վրաց զօրացն, յոյժ ուրախացան վասն ազատելոյ զերկիրն խուժանաց 'ի չարչարանաց Թագաւորին: Այսպէս կազմեցին զխուժանս քաջալէս 'ի գործ պատերազմի. Նոյնպէս և Սիրամունն որդի Չաւրմաղանին, որ էր յոյժ սիրող քրիստոնէից, առեալ զնշան Դանին հարիւր հազար հեծելօք, և յանկարծակի հասին 'ի վերայ Թագաւորին և անխնայ կոտորեցին ըզհեծեալս նորա, և առին զամենայն գանձս նորա, և զինքն եւթն հարիւր մարդով և տարան առ Դանն: Եւ Դանն անուանեալ ծառք արար ըզնա. և ետ նմա կին մի՛, և զանակ մի ծայրն կոտրած, և տասն մարդ սպահապան, և յուղարկեաց զնա 'ի մէջ Աղի ծովուն, որ կայ 'ի Հէր և 'ի Զարաւանդ գաւառի. և աստ կատարեցաւ բան մարգարէին որ ասէ. « Մարդ 'ի պատուի էր և ոչ իմացաւ »:

ԳԼՈՒԽ ԺԵ·

Յաջորդէ Լեւոն զհայր իւր հաճութեամբ Աբաղայ Ղանի ։ Ընթացք Լեւոնի առ նենգաւորս յիշխանացն ։ Յայտնութիւն նշխարաց մեծին Ներսիսի ։ Վերջ ։

Իսկ պարոն Լեւոն որդի Հայոց թագաւորին գնաց առ աջի Աբաղայ Ղանին, և պատմեաց ըզմահ թագաւորին. և յոյժ սիրեցեալ և պատուեալ եղև ՚ի Ղանէն. և առեալ հրաման ՚ի թագաւորելոյ ՚ի տեղի հօր իւրոյ դարձաւ և եկն յերկիրըն իւր. և արար ժողով մեծ իշխանաց. եպիսկոպոսաց, քահանայից. վարդապետաց. ՚ի մեծ և ՚ի հասարակաց և ՚ի հռչակաւոր քաղաքն Տարսոն. կոչեաց և զմեծ եպիսկոպոսապետն Հայոց զՏէր Յակոբ։ Եւ ապա հրամայեաց ժողովել ՚ի մեծ և ՚ի փառաւոր սուրբ Եկեղեցին ՚ի սուրբ Սոֆի. եւ առնել հսկումն և աղօթս, և օրհնել զինքն թագաւոր. ուստի և կատարեցին իսկ կամօք երկնաւոր թագաւորին Քրիստոսի. օրհնեցին և օծին եղովին ուրախութեամբ զթագաւորորդին Լեւոն՝ թագաւոր ՚ի վերայ ամենայն Հայոց. և եղեւ ցնծութիւն և ուրախութիւն մեծ ամենայն աշխարհիս Հայոց. և եղև նոր նորոգումն և նոր ուրախութիւն ազգին Թորգոմեանց.

Իսկ ինքն արքայածին արքայն Լեւոն, էր յոյժ խորհիմաց և խելօք ՚ի մանկութենէ իւրմէ. և ճանաչէր զամենայն բարեկամս և զչարա-

կամօք իւր , բայց ոչ հանէր 'ի լոյս . այլ կայր լը-
ռեալ մինչ ծնանել այն . որ յղացեալն էր ցաւօք :
Վ. անն զի 'ի յիշխանաց թագաւորութեան իւրոյ
կային ոմանք որ Հոռոմ էին ազգաւ , և լցեալ
էին մեծութեամբ գանձու և ամենայն բա-
րեգործութեամբ , և յետ երից ամաց թագա-
ւորութեան Ներսէս խորհեցան չար 'ի վերայ
թագաւորին . և կամեցան զՀայոց թագաւո-
րութիւնն ջնջել , և ինքեանք թագաւորել
պերճ և ու բազում ազգն Հոռոմոց , սոսա քը-
րիստոնեայքն և սառայք Քաղկեդոնիկքն . զի ե-
դեալ էին 'ի մտի քակել պղանորայքս , և զՀա-
ւանեալսն 'ի յաղանդս նոցա ածանել . և զոչ հա-
ւանեալսն բառնալ 'ի կենաց : Եւ զի ոչ միայն
ինքեանք էին որ աւանէին զայս , այլ և խառնեալ
էին 'ի վարդապետաց և 'ի քահանայից Հայոց
և յիշխանաց ոմանց երկմտաց , կալ 'ի մի դաւա-
նութիւն , և միաբան նենգել Հայոց : Այլ իր-
նամք արարչին Աստուծոյ ոչ արար անարգ զա-
ղօթս ծառայից իւրոց , այլ պահեաց զարքայածին
արքայն Հայոց զԼեւոն իւր ամեն թագաւո-
րութեամբն հաստատուն և անփորձ 'ի չարեացն
զոր խորհեալ էին . և ինքեանք որ զչարսն էին
խորհեալ՝ անկան 'ի գուբն զոր փորեալ էին . զի
քրիստոսապսակ թագաւորն Լեւոն իւրով ի-
մաստութեամբն ըմբռնեաց 'ի չարախորհուրդ
մարդկանցն , և եգիտ զգրեալ գիր զանուանս
միաբանելոց 'ի չար խորհուրդն յայն , զոր Հայ
և զոր Հոռոմ , և առաքեաց զմիամիտ աղաւա-
ւորսն իւր ըմբռնեաց զնոսա . զոմն եսպան , զոմն

եղ 'ի բանտն անզերծանելի. զորն տարաւ ստ. Արտաղայ Դանն յայտնեալք, և անդ յաստանին հաւատոյն. և զայլ ամեն թշնամին եղեւն 'ի ձեռս նորա և հրամայեցին թեպետ պահել թեպետ սպանանել ։

Եւ այսպէս զօրացեալ և յաղթող գտեալ 'ի վերայ թշնամեաց իւրոց Թագաւորն Հայոց Լեւոն օգնութեամբ երկնաւոր Թագաւորին Քրիստոսի. որոյ և աղօթիւք ամենայն սրբոց Քրիստոս Աստուած յաղթող պահեսցէ զԹագաւորութիւնն Լեւոնի Հայոց Թագաւորին, բարի զաւակօք իւրովք 'ի վերայ ամենայն թշնամեաց իւրոց, և զկեանս նորա տացէ եկեղեցւոյ իւրում Քրիստոս Աստուած ընդ երկայն ժամանակս ։

Ընդ այս աւուրբս յայտնեցաւ պատուական և սուրբ նշխարք մեծին Ներսիսի Հայրապետին Հայոց յիւրեանց հանգստարանին. որոց սուրբ աղօթիւք նորա տացէ Քրիստոս Աստուած խաղաղութիւն ամենայն աշխարհի, և նմա փառք յաւիտեանս. ամէն ։

Կատարեցաւ պատմութիւն Տանթարիս գործելոց քառասուն և չորս ամաց. բայց համառօտ և ոչ ամենն ։




ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՄԱՏԵՆԻՍ

Յամի ելթն հարիւրերորդի քսաներորդի թուականութեանս Հայոց (1271) · գրեցաւ աշխարհապատում տառս այս հրամանաւ սուրբ և փառաւորեալ հօր Ստեփաննոսի Ակնից անապատիս · այլ և կամակցութեամբ փակակալի սուրբ անապատիս Վարդանայ և ամենայն եղբայրութեանս քահանայից եւ կրօնաւորաց · ձեռամբ տառապեալ գրչի Գրիգորոյ ապաշաւորի բանիին :

Արդ աղաչեմք զպատահեալսդ 'ի սմա · որք ընթեռնույք զաշխարհապատում տառս զայս, յիշեցէք 'ի Քրիստոս զհայրն Ստեփաննոս · և զծնողսն իւր · ընդ նմին և զամենայն եղբայրութիւնս սորա Անապատիս, զքահանայսն և զկրօնաւորսս, և զմեղուցեալ գրիչս · զի դուք որ յիշէք զմեզ, յիշեսցէ և զձեզ Քրիստոս Աստուած յողորմութիւն իւր · ամէն :

1-4-955



ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

ԵՐԵՍ



